№ 232 ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20

1905

ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20 № 232

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Եղիսաբէթ, Աւետիս, Օսաննա, Մկրտիչ, Թովմաս և Գէորգ Խանդուլեանցները ցաւօք սրտի յայտնում են առաջինի և երկրորդի սիրելի որդու, երրորդի տաքեր և վերջինների թանկագին և անմոռանալի եղբօր

Բագրատ Աւետիսեան Խանդուլեանցի

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 15-ին։ Ամբիծքը կը կատարվի ուրբաթ և շաբաթ երեկոյեան ժամը 6-ին, իսկ թաղումը կիրակի, ամսիս 20-ին, առաւօտեան ժամը 10-ին (Բէբուտօվսկայա փողոց, տուն № 42) դէպի Նորաշէնի եկեղեցին, այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։ (ո. շ. կ.) 3—3

Հայրապետ և Մկրտիչ Աւետիսեանները ցաւօք սրտի յայտնում են իրանց քրոջ որդի՝

Բագրատ Աւետիսեան Խանդուլեանցի

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 15-ին։ Անբիծքը կը կատարվի շաբաթ օր երեկոյեան ժամը 6-ին, իսկ թաղումը կիրակի 20-ին (Բէհբուտօվսկայա փողոց, տուն Քալանթարեանի № 42) դէպի Նորաշէնի եկեղեցին, իսկ այնտեղից դէպի Խօջիվանքի հանգստարանը։ (շ.կ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գանձակի աղէտը. Մեր բացառիկ դրութիւնը. Հայ բանւորները. Վերջին տեղեկութիւններ. Փոխարքայի այցելութիւնը Վեհափառ Կաթողիկոսին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բագուի պատգամաւորութիւնը Փոխարքայի մօտ. Հրաւէր. Թուրք նահանգապետը. Մի քանի խօսք. Ազատութեան առաջին օրը. Ծխախոտագործների վիճակը Սուխումի շրջանում. Նամակ Գանձակից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիայի դաւերը. Զօրեղ հակադրութիւն. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Նորագոյն «մագլուս» երևոյթների աշխարհից.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայոց հարցը։

ԳԱՆՁԱԿԻ ԱՂԷՏԸ

Աղէտաբերդն—տխուր իրականութիւն է։

Մենք երէկ հաղորդեցինք նախնական մի քանի տեղեկութիւններ։ Այնուհետև ստացվեցին նոր տեղեկութիւններ և մանրամասնութիւններ։

Տեղի ունեցան հրացանաձգութիւն, հրդեհ, կոտորած, կողոպուտ—այն բոլորը, ինչ որ մեզ ծանօթ են Բագուի, Նախիջևանի, Շուշու, Զանգեզուրի սոսկալի դժոխքներից։

Աւելացաւ և այս նոր դժոխքը։

Սարսափելի և քստմնելի իրականութիւն, որ չէ դադարում լեղիի բաժակներ տալ մեզ։ Եւ ինչու, ինչ պատճառով, ինչ մեղքի համար։

Անցեալ օր երեկոյեան, երբ մենք ստացանք առաջին տխուր տեղեկութիւնները Գանձակի մասին, մենք համոզված էինք, որ գործը շատ լուրջ կերպարանք է ստացել։ Մեզ մօտ եկան երկու անձ, որոնք և պատմեցին կոտորածի սկիզբը։

Նրանք պատմեցին, որ հէնց որ ընդհարումը սկսվում է Գանձակում, իսկոյն քաղաքից ձիաւոր թուրքեր շտապում են դէպի շրջակայ թուրքական գիւղերը իմաց տալու և զինակիցներ բերելու այնտեղից։ Նրանք պատմեցին, որ վերջին օրերս թուրքերի մէջ նկատվում էին առանձին յուզմունք, խորհրդաւոր համախմբումներ, դրամական ժողովարարութիւններ, կազմվում էին զինված խմբեր իբր թէ այն նպատակով, որպէս զի չքացնեն աւազակային հրոսակախմբերի գործունէութիւնը։

Բայց մի բան օտարոտի էր թւում բոլորին, որ առաջվայ ժամանակներում երբեք նկատված չէին եղել թուրքերի այդպիսի կազմակերպութիւններ աւազակների դէմ։ Եւ եթէ զինված խմբերը այդպիսի նպատակներով են կազմվել, ինչու էին նրանք հայերից գաղտնի և ծածուկ պահվում։ Հայերը իրանք միշտ եղել են աւազակների դէմ և, անկասկած, նրանք էլ կը նպաստէին աւազակների դէմ մաքառելու համար։

Հայերը նկատում էին թուրքական առարկութիւնների անհեթեթութիւնները, բայց և այնպէս ուզում էին դեռ լաւատես մնալ, դեռ հաւատալ իրանց հարևաններին, դեռ դաւադրութիւն չը տեսնել իրանց կողմից։

Առիթն էր միայն պակաս։

Վերջապէս առիթն էլ երևաց։ Գանձակի քաղաքից դուրս նոյեմբերի 18-ին, առաւօտեան 7 ժամին, սպանվում են երկու թուրք։ Ո՞վ է նրանց սպանել, յայտնի չէ։ Թուրքերը առանց սպասելու քննութեան, վճռում են, որ հայերն են սպանել և սկսում են յուզել ամբոխը։ Չէ անցնում մի քանի ժամ և ահա բռնկվում է թուրքերի յարձակումը հայերի վրա։

Թուրքերի թաղում եղած հայերը փակում են իրանց խանութները և շտապում դէպի իրանց տները։ Թուրքերը կրակ են տալիս հայկական խանութները, բայց մի անգամ սկսված հրդեհը այլ ևս հանգցնել անկարելի էր, ուստի կրակը անցնում է և թուրքերի խանութներին։

Մի շարք հեռագրական տեղեկութիւններ, որ զետեղում ենք ներկայ համարում, գաղափար կը տան աղէտի ընդարձակութեան մասին։

Հաղորդենք նոր եկողների տուած հետևեալ տեղեկութիւններն էլ։

Գանձակից կարողացել են դուրս գալ շատ քիչ անձեր։ Մի գերմանացի, որ եկել է քաղաքից, պատմում է, որ նա քաղաքից կայարան գալու ժամանակ տեսել է ճանապարհին բաւական թւով հայ դիակներ։ Նա պատմում է, որ «Եւրոպա» հիւրանոցը ենթարկվել է ռմբակոծութեան այն պատճառով, որ իբր թէ այնտեղից գցված է եղել ռումբ։

Դալլիմամեդլի կայարանից անցնող մէկը պատմեց մեզ, որ զինված թուրքերը պատել են կայարանը և յարձակվում են նոյն իսկ վագոնից դուրս եկած հայերի վրա։

Երկաթուղով եկած ճամբորդները պատմում են, որ Գանձակի մօտ եղած մի քանի կայարաններ բոլորովին դատարկվել են մարդկանցից։

Գանձակից ստացված մի հեռագիր յայտնում է, որ երէկ, ամսի 19-ին, կէսօրի մօտ, հրացանաձգութիւնը դադարել է և լսվում են եղել միայն հատ հատ պայթիւններ։ Ի միջի այլոց բնորոշ է այն, որ թուրքական խանութները նախօրօք բոլորովին դատարկված են եղել ապրանքից, որը տարվել է տները այնտեղ պատսպարելու նպատակով։

Գանձակի կայարանից մի անցնող տեղեկացել է, որ կայարանի շուրջը կանգնած են թուրքական հրոսակախմբեր, պատրաստ յարձակվելու կայարանի վրա։

ՄԵՐ ԲԱՑԱՌԻԿ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Յուզմունքների, խմորումների, քաղաքական և հասարակական ձևակերպումների մի զարմանալի ժամանակ։ Դժգոհութիւնը գնալով ուռչում է, լեռնանում։ Պահանջները օր օրի վրա սաստկանում են։ Երէկ ուրիշ էր վերանորոգվել, ազատ հիմնարկութիւններ պահանջող հասարակութիւնը, այսօր—բոլորովին ուրիշ, հարիւրաւոր քայլերով առաջ գնացած։ Երէկվանը այսօրը չէ գոհացնում, ինչպէս այսօրվանը այլ ևս չը պիտի գոհացնէ վաղը։

Եռանդով աշխատող, փոփոխող միտքը հետզհետէ աւելի և աւելի խոր է գնում, նա արդէն համնում է պետական և հասարակական կազմուածքի հիմքերին, ուզում է վերաշինել ամեն ինչ, քանդվող հնութեան վրա բարձրացնել նոր քաղաքական և սօցիալական կարգեր։ Իւրաքանչիւր ազգութիւն ճիգ է թափում մտնել նոր կարգերի շրջանը իբրև եռանդուն աշխատաւոր։ Ամեն մէկը հասկանում է, որ ընդհանուր շինարարութեան մէջ պիտի ունենայ իր տեղը, իր բաժինը, որպէս զի վաղվայ ազատ իրականութեան մէջ էլ ունենայ իր ձայնը, իր հեղինակութիւնը։

Կեանքը, այո, եռում է անասելի թափով։ Անգործութեան համար տեղ չը կայ նրա մէջ, անգործութիւնը միայն գերեզմանում է հանգչում։ Այդ զգում ենք, ի հարկէ, և մենք, հայերս։ Ե՞րբ չենք զգացել։ Ե՞րբ ենք յետ մնացել առաջադիմական շարժումներից։ Մենք էլ ոգևորվում ենք, մենք էլ մտնում ենք ազատարար շարժման մէջ, մենք էլ բռնում ենք օրվայ դրօշակը՝ միւսների հետ մի շարքում առաջ գնալու համար։

Բայց այդպէս անելով, մեր մարդկային քաղաքացիական պարտքը կատարելով, մենք—աւա՜ղ—մոռանում ենք մեզ։ Մոռանում ենք մեր բացառիկ իրականութիւնը, այն, որ նոյն իսկ այս կարմիր օրերում, ազատութեան այս հուժկու եռանդի օրերում, մեր դիմաց կանգնած է թուրքը, Մառուզերի հրացանը ուղղած մեր կրծքին...

Այսօր էլ Գանձակն է արիւնլուայ դառնում։ Եւ ահա այդ բարբարոս իրականութիւնը բռնում է մեզ, ոգևորվողներիս փէշից, յետ է քաշում, հարկադրում է նայել իրան։

Ամբողջ Ռուսաստանը միաբերան պահանջում է, որ անյապաղ վերացվի պատերազմական դրութիւնը։ Մենք էլ կրկնում ենք այդ պահանջը։ Չէ՞ որ մարդ ենք, չէ՞ որ զգում ենք թէ զինուորի կռունկների տակ քաղաքացիական ազատ կեանք չէ կարող լինել։

Մենք էլ ասում ենք. վերացրէք պատերազմական դրութիւնը։

Բայց գաւառացի հայութիւնը հարց է տալիս։ Ի՞նչպէս,—ասում է նա,—վերացնե՞լ պատերազմական դրութիւնը, երբ ես այստեղ քիչ եմ համարում եղած զօրքերի թիւը։ Սարովի գիւղացին դուրս է գալիս իր արտը վարելու կօզակի հովանաւորութեամբ։ Մարաղա գիւղի բնակիչները իրանց բամբակը Գանձակ են տանում վաճառելու՝ շրջապատված նոյն կօզակներով։ Իսկ դուք ասում էք թէ հեռացրէք զօրքերը։ Հեռացնե՞մ։ Բայց այն ժամանակ ո՞վ պիտի գայ գիւղացուն պաշտպանելու թուրքական դաւաճան գնդակից։ Լաւ թէ վատ, այսօր դեռ այդ զինուորը, այդ կօզակն է, որ կանգնում է հայ գիւղացու և թուրքի մէջ տեղը։ Եւ դեռ չը նայած դրան՝ երկիր մշակելը այնքան սարսափելի դժուարացել է, որ ամբողջ հայ գիւղական աշխարհը կանգնած է անելի սովի առաջ։

Ահա անողորմ իրականութեան խօսքը։ Ո՞վ կարող է ասել արիւնով և հրդեհով շրջապատված գիւղացուն. լսիր, ահա քեզ տուել են անձի անձեռնմխելիութիւն, խօսքի, ժողովների ազատութիւն, վաղը անշուշտ կը ստանաս և ընդհանուր, հաւասար, գաղտնի, ուղղակի ձայնատւութեան իրաւունք էլ։

Դա կը նշանակէր ծաղրել մարդուն. կը նշանակէր ասել նրան, մեռիր, իսկ ես քո գերեզմանը կը զարդարեմ ծաղիկներով...

Ամբողջ Ռուսաստանը պատերազմական դրութեան դէմ է և գաւառական հայն է միայն, որ ուզում է այդ դրութեան շարունակութիւնը։

Հայը հարկադրված է այդպէս անել։ Նա ուզում է ապրել, նա պէտք է նախ և առաջ ապրող մարդ դառնայ, որպէս զի գնայ իր կոչման ճանապարհով։ Նա ստիպված է դիմել նոյն իսկ ամենաանկատար, ամենաթոյլ, գուցէ և միանգամայն անպէտք միջոցների իր գոյութիւնը, իր ֆիզիկական կեանքը պահպանելու համար։

Սա դժբախտութիւն է, սա անէծք է։ Բայց ինչ է ցոյց տալիս։ Այն, որ հայը մի բոլորովին բացառիկ դրութեան մէջ է գտնվում, այն, որ նա միանգամայն անօգնական է, ամենից մոռացված, բազմաթիւ թշնամիներով շրջապատված։ Նա գերբնական ջանքեր է գործ դնում բոլորովին չանյայտանալու, բոլորովին չը ջնջվելու համար։

Հասկացէք նրա դրութիւնը։ Այդ է ամենագլխաւորը։ Ա՛յդ կը լինի նրա միակ թշուառ մխիթարութիւնը այս իրական դժոխքի մէջ, որ տուած է նրան... ահ, ապրելու համար։

ՀԱՅ ԲԱՆՒՈՐՆԵՐԸ

Մեզ հաղորդում են Բագուից, որ հայ ֆիրմաների մեծ մասը անգործ է, դեռ չէ վերսկսել իր աշխատանքները։

Իսկ օտար ֆիրմաները եռանդուն կերպով գործում են։ Նրանցից մի քանիսը կարողացել են այնքան կարգի բերել իրանց գործերը, որ արդէն ձեռնարկել են իրանց հանքերի կանոնաւոր շահագործութեան։

Ինչո՞ւ հայկական ֆիրմաները բացառութիւն են կազմում։ Ինչո՞ւ նրանք չեն գործում։

Պատճառներից գլխաւորը այժմ հայ բանւորների դրութիւնն է։

Գործող օտար ֆիրմաները վերցրել են ռուս և թուրք բանւորներ և աշխատում են անարգել կերպով։ Իսկ հայ բանւորները չեն վստահանում վերսկսել իրանց աշխատանքները։

Հայ բանւորները պահանջում են ապահովութիւն իրանց համար, պահանջում են երաշխաւորութիւն, որ կոտորածները չեն կրկնվի և նրանց կեանքը խաղալիք չի դառնայ խուլիգանների, աւազակների, մարդասպանների ձեռքին։

Ֆիրմաները չեն կարողանում վստահութիւն տալ, չեն վերցնում իրանց վրա պատասխանատուութիւն և երաշխաւորութիւն։ Նրանք մի քանի անգամ դիմել են տեղական իշխանութեան, իսկ վերջինս միշտ ամենասիրալիր, ամենաբարեացակամ և ամենաքաղաքավար հաճոյախօսութեամբ հանգստացնում է բոլորին այն մշտական հաւաստիացումներով, որոնք միշտ պատասխանվել են, բայց որոնք չեն խանգարել ոչ օգոստոսեան և ոչ հոկտեմբերեան սարսափելի կոտորածները։

Վստահութիւն չը կայ Բագւում վաղվայ օրվայ մասին, ապահովութիւն չը կայ բանւորի համար, որ նա կարող կը լինի իր աշխատանքով զբաղվելու, իր քրտինքով իր վաստակը վայելելու։

Ճիշտ է, ռուս բանւորների մի բազմութիւն համակրութեամբ է վերաբերվում հայերին, բայց նա անկարող է պաշտպանել հային այն թշնամիներից, որոնք ամիսներ շարունակ, խտրութիւն չը դնելով միջոցների մէջ, հալածում են հայ բանւորներին նաւթային շրջանում։

Հայ բանւորների դրութիւնը շատ է զբաղեցնում բագուեցիներին, բայց նրանք մինչև այժմ չեն կարողացել դրական և բաւարար կերպով լուծել հարցը։ Բագուեցիները այն կարծիքի են, որ դժուար է բարի հետևանքների հասնել, եթէ դաւադրական չարամիտ գործողները կը շարունակեն իրանց միակողմանի հալածանքը հայերի դէմ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երէկ Գանձակից ստացանք հետևեալ «սրօչնի» հեռագիրը, խմբված առաւօտեան ժամը 11-ին.

«Գանձակում երկրորդ օրն է կոտորած է։ Զօրքերի թիւը քիչ է։ Թուրքերը պաշարել են քաղաքը։ Դրութիւնն անել է»։

—

Գանձակից ստացվեց հետևեալ հեռագիրը, երէկ, շաբաթ, նոյեմբերի 19-ին.

«Քաղաքում հայ-թուրքական կոտորած է սկսվել, քաղաքը այրվում է։ Կէրօսինի Գանձակ կայարանի մօտ հետևակ զօրքը պահում է դէպի քաղաքը շարժվող թուրքերի առաջը։ Տեղի ունեցաւ հրաձգութիւն։ Զինւորները խփում էին պաչկաներով։ Թուրքերը փախան։ Այս րօպէին կայարանի շրջակաները ամեն կողմից շրջապատված են զինաւորված թուրք հրոսակներով։ Կայարանը պաշտպանվում է կամաւոր միլիցիօներներով և հետևակի մի փոքր քանակութեամբ։ Որովհետև օրվայ հրաձգութեան մէջ զինւորները սպանել են մի քանի թուրքեր, գիշերը սպասվում է յարձակումն կայարանի վրա։ Այս րօպէիս, ժամը 12-ին գիշերվայ, քաղաքը կրակի մէջ է, լսվում է անընդհատ հրաձգութիւն։ Լուրեր են ստացվել, որ Ալաբաշլուց շարժվում են Գանձակի վրա մօտ 500 թուրքեր, որոնք կողոպտել են գերմանական այգիները և կոտորել բոլոր հայերին։ Մատուտակի գործարանից ոչ հեռու, լուրերին նայելով, կենտրոնացած են մօտ 1000 թուրք։

—

Անդրկովկասեան երկաթուղիների գլխաւորը ստացել է երկաթուղու 9-րդ բաժնի գլխաւորից հետևեալ հեռագիրը.

Գանձակ, նոյեմբերի 18-ին, երեկոյեան ժամի 11-ին.

Այսօր առաւօտից Գանձակում սկսվեց թուրք-հայկական կոտորած։ Երկու կողմից մեծ քանակութեամբ զոհեր կան։ Հրդեհներ են մի քանի տեղերում և ըստ երևոյթին ժամ առ ժամ աւելանում են։ Շրջակայքում երևացին մեծ քանակութեամբ զինված թուրքեր, որոնց դէմ կայարանը պաշտպանվում է զինւորների հրացանաձգութեամբ. այստեղ մի քանի թուրքեր սպանված են։ Քաղաքից կայարանը համարեա կտրված է, ծառայողների տրամադրութիւնը չափազանց յուզված է, որովհետև քաղաքից օգնութիւն հասցնել չեն կարողանում. իսկ գոյութիւն ունեցող պահապանների թիւը բոլորովին անբաւարար է։ Այսօր գիշերվայ համար կազմակերպեցինք պաշտպանութիւն ծառայողներից, բայց նկատի առնելով զէնքի քչութիւնը, լուրջ օգնութիւն նրանից սպասել դժուար է։ Խնդրում եմ միջնորդէք ուր հարկն է անյապաղ ուղարկել զօրք կամ զէնք—հրացաններ և րէվօլվէրներ։ Հակառակ դէպքում ոչ կայարանի և ճանապարհների ամբողջութեան, ոչ էլ ծառայողների կեանքի համար երաշխաւորել չէ կարելի։

—

Գանձակի նահանգական դատարանի առանձին կարևոր գործերի քննիչը հեռագրում է. «Գանձակի կայարանում միայն 80 զինւորներ կան, իսկ շուրջը 1000 զինաւորված թուրքեր. քաղաքում կոտորած և հրդեհ է։ Հարկաւոր է օգնութիւն ուղարկել»։

—

Երկաթուղու հեռագրատան ծառայողների, վերակացուների և մեխանիկների ընդհանուր ժողովը, հայ-թուրքական կոտորածի սկսվելու պատճառով և երկաթուղիական ծառայողների և Թիֆլիսի սօցիալ-դէմօկրատական բանւորական կազմակերպութեան ընդհանուր ժողովի բիւրօի առաջարկութեամբ, միաձայն որոշեց հեռագրական հաղորդակցութիւն բանալ Գանձակի հեռագրական շրջանի տարածութեան վրա, միայն այն պայմանով, որ թէ պաշտօնական և թէ մասնաւոր հեռագիրները ընդունվեն հայ-թուրքական ընդհարման հարցի վերաբերմամբ։

—

Երէկ երեկոյեան ժամը 8-ին Գանձակ ուղևորվեցին Թիֆլիսի քաղաքային դումայի կողմից մի խումբ անձինք, որոնց մէջ վարչութեան անդամ Կեօկչայեվը, ձայնաւորներ Ալ. Խատիսեան, Զըրեանեվ և ուրիշներ։ Թուրք հասարակութեան կողմից ևս գնում են մի քանի ազդեցիկ անձինք։ Գնացողների նպատակն է—աշխատել խաղաղութիւն հաստատել հայերի և թուրքերի մէջ։

—

Գանձակը այրվում է. ահա այն երկու բառերը, որոնցով կարելի է արտայայտել գիշերվայ ժամը 12-ին, մթութեան մէջ մի քանի վերստի վրա բոցբոցվող հրդեհի տպաւորութիւնը երկաթուղու գնացքից թշուառ քաղաքի նկատմամբ։

Թուրքական բարբարոսութիւնների բեմ այս անգամ ներկայացաւ Գանձակը, ուր մի կողմից հրդեհը, միւս կողմից զէնքը գործում է աւեր և որի մասին կարող ենք հաղորդել հետևեալ տեղեկութիւնները, հաւաքելով այդ ճանապարհին և Գանձակի կայարանում։

Նոյեմբերի 18-ին, երեկոյեան ժամը դեռ ևս 7-ին, Եւլախ կայարանը չը հասած, գնացքում, լուր տարածվեց, որ Գանձակում սկսվել է կոտորած. այդ լուրը միանգամայն հաստատվեց երբ հասանք Եւլախ։ Կայարանում արդէն խօսակցութեան նիւթը այդ էր, հայ խանութպանները կողպեցին խանութները և նստեցին գնացք, սպասվող վտանգից գլուխ ազատելու համար։ Նրանք ասում էին, որ կասկածաւոր թուրքեր հետևում էին հայերին և դրանք ունէին տեղեկութիւն Գանձակի կոտորածի մասին։ Երկաթուղու մի պաշտօնեայ պատմում էր, որ իբր առաւօտեան ժամը 10-ին, մի թուրք մի հայ խանութպանից գնում է մի դրվանքա շաքար և ապա յետ բերում. խանութպանը չէ ուզում յետ ընդունել և այդտեղից ծագում է կռիւ, որը ընդունում է մասսային բնաւորութիւն։ Եւ պատմում էին նման բաներ, բայց ոչ մի խօսք հրդեհի մասին. սակայն մենք լաւ իմանալով թուրք խուժանի վայրենի հակումները, նրա ձգտումը դէպի հրդեհը ու աւերը, քունս փախցրած, կսկիծը սրտումս, կպած վագոնի լուսամուտից, լարված ուշադրութեամբ դիտում ենք Գանձակի կողմը։ Եւ մեր գուշակութիւնը սխալ չէր։ Դեռ 7—8 վերստ Գանձակի կայարանին չը հասած մթութեան մէջ նկատվեցին երկու ուժեղ շառագունումներ, որոնք գնալով մեծանում, աւելի նկատելի էին դառնում։ Վերջապէս բոլորովին պատկերացան երկու հրդեհումներ, երկու վիթխարի խարոյկների նման, որոնք ծուխ ու բոց էին արձակում գուժելով աւերող ձեռքի ներկայութիւնը։ Գիշերվայ ժամը 12-ին գնացքը կանգ առաւ կայարանի առաջ. սրտատրոփ ցած նետվեցինք. կայարանը համարեա դատարկ էր, կային հայեր, որոնք այս և այն տեղից հաւաքվելով հնար չէին գտնում քաղաք մտնել։ Նրանք ճիշդ տեղեկութիւններ չունէին. «Թուրքերը յարձակվել են հայերին կոտորել, խանութները թալանել և ապա հրդեհել» ահա այն ընդհանուր տեղեկութիւնը, որ նրանք տալիս էին։ Դրանով մենք չը բաւականացած դիմեցինք ժանդարմին և խնդրեցինք տեղեկութիւն. և նա աւելի բան պատմեց։ Այսօր ուրբաթ է, թուրքերի կիրակին. թուրք խանութները կողպած են եղել, իսկ հայերինը բաց. թէ ինչն է եղել առիթ, չը գիտեմ, միայն առաւօտեան ժամը 11-ին թուրքերը յարձակվել են հայերի խանութների վրա և կրակել. հայերից որը ընկել է և որն էլ խանութը թողել ու փախել, ապա սկսվել են կողոպուտը և հրդեհումները հայ խանութների շարքում։ Իսկ երեկոյեան ժամը 5 թէ 6-ին հրդեհել են հիւրանոցները։ Սպանվածների թիւը 50-ից աւելի է. զօրքի մի մասը քաղաքի մէջ է, միւս մասը քաղաքից դուրս կանգնեցնում է շրջակայ գիւղերից եկող թուրքերի հոսանքը, ուր իբր սպանված են երկու զինւորներ խուժող թուրքերի հետ ընդհարումն ունենալիս։

Մի հեռագրական ծառայող պատմում էր, որ ինքն ժամը 11-ին, ոմն Սուքիասեանի խանութում գնում էր մթերքներ. դեռ մթերքները չը կշռած վերջացրած, յանկարծ լսվում են հրացանի պայթիւններ։ Սուքիասեանը լսելով, անմիջապէս կանչում է հարևան խանութպաններին և խանութները բաց ձգելով փախչում են. թէ ինչ է պատահում նրանց հետ՝ չը գիտէ։

Մի քանի այլ տեղեկութիւններ տուեց Ապշերօնեան գնդի մի ռուս զինւոր, որը իր հիւանդ օֆիցերին ուղեկցում էր դէպի Թիֆլիս։ Նրա պատմելով այրվում են 20-ից աւելի հայ խանութներ և մի մեծ հիւրանոց, որը, ասում էին, լինելու է Սարաֆեանի տունը։ Սպանված են մօտ 100 հոգի, երկու մասը հայեր—մի մասը միայն թուրքեր. սպանված է քաղաքի մէջ թուրքի գնդակից մի զինւոր։ Թուրքերը հայ խանութներից իրերը կրում էին սայլերով անգամ։ Զօրքերին արգելված է կրակել, մինչև անգամ—այդ զինւորի պատմելով—զինւորները դիմել են օֆիցերին թոյլ տալու օդի մէջ կրակելու. մերժումը պատճառաբանվել է նրանով, մի գուցէ թուրքերը զրգռվեն։ Թուրքերը մինչև այժմ հայկական Թաղին չեն մօտեցել—այդտեղից վախենում են։ Զօրքը բռնած ունի հայ և թուրքական թաղերի մէջի տարածութիւնը։ Գեներալ Տախայշվիլին 4 օր է ինչ վերադարձել է Գանձակ. զինւորի պատմելով, նա կառք նստած և մի քանի տասնեակ կօզակներ քամակը ձգած՝ շրջում է քաղաքի մէջ։

Մենք գրեցինք այն, ինչ որ լսեցինք, աւելի ճիշդ տեղեկութիւններ երևի շուտով կը տան տեղական թղթակիցները նաև այն մասին, թէ ինչ դեր է բռնել զօրքը—մանաւանդ գեներալ Տախայշվիլին։

Առ այժմ այսքանը կարելի է ասել, որ գեներալ Տախայշվիլու վրա ծանրանում է մի մեղք, այն, որ նահանգի բոլոր տեղերից տալիս է հանգստացուցիչ լուրեր, մինչդեռ նահանգի կենտրոնում այժմ իր ներկայութեամբ բարբարոսների ձեռքով հրդեհի զոհ է դառնում խաղաղ ազգաբնակութեան գոյքը և հոսում է անմեղ արիւնը։

Ինչ ասել, ինչ անուն տալ այս բոլորին և վերջապէս մինչև երբ...

Ա—Դօ

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երէկ, նոյեմբերի 19-ին, Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվ այցելութիւն տուեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, որ հիւանդ լինելով ընդունեց նրան առանձնասենեակում։

Առաջնորդարանի սանդուղները ծածկված էին կարմիր մահուդով, իսկ դրան մօտ դիմաւորեցին Փոխարքային մի խումբ քահանաներ, Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանը, Եփրեմ և Յուսիկ վարդապետները։ Տեսակցութեան ներկայ էին Սուքիաս արքեպիսկոպոս Պարգևեանցը, Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանը և Նահապետ եպիսկոպոսը։ Թարգմանն էր Յուսիկ վարդապետը։

Ողջունելով Կաթողիկոսին, Փոխարքան հարցրեց նրա առողջութիւնը։ Վեհափառը պատասխանեց, որ ինքը հիւանդ է, բայց հիւանդութիւնը ամեն րօպէ ծանրանում է այն ահռելի սոսկալի լուրերից, որ շարունակ ստանում է զանազան տեղերից հայ հօտի սպանութեան և աւերածութեան մասին։ Այժմ էլ սկսվեց նոր աղէտ Գանձակում։

Փոխարքան կարդաց Վեհափառին երկու հեռագիր. մինը Գանձակի ընդհանուր-նահանգապետ Տախայշվիլուց, որ հաղորդում էր թէ ուրբաթ առաւօտեան գտել են երկու սպանված թուրքերի դիակներ. թէև անմիջապէս սկսվել է քննութիւն, իմանալու համար ով է սպանել, բայց թուրք խուժանը սկսեց յուզվել, հայերը շտապեցին խանութները փակել, ապա թէ հայերի և թէ թուրքերի թաղերում հրացանաձգութիւն սկսվեց, խանութները հրդեհվեցին. կրակը հանգցնելու միջոց չը կայ, որովհետև Գանձակում հրդեհաշէջ մեքենաներ չը կան. զօրքը քիչ է, որովհետև պահպանում է զանազան կէտեր, խնդրում է նոր զօրք ուղարկել։ Երկրորդ հեռագիրը, ոստիկանապետից, յայտնում է, թէ խմբական կոտորած չը կայ, այլ լինում են առանձնակի հրաձգութիւններ. խանութները այրվում են, բայց լաւ մագազինները կարելի է եղել պաշտպանել հրդեհից, միայն մեծ երկիւղ կայ, որ շրջականերից նոր հրոսակներ գան քաղաքացիների օգնութեան։

Կաթողիկոսը խնդրեց եռանդուն և կտրուկ միջոցներ ձեռք առնել։ Փոխարքան պատասխանեց, որ արդէն այսօր է զօրք ուղարկվում, որովհետև Գանձակի զօրքի մի մասը ուղարկվել է Շամախի, ուր նոյնպէս շարժումն է նկատվում։

Տեսակցութիւնը տևեց 25 րօպէ։ Երբ Փոխարքան դուրս եկաւ առաջնորդարանի դահլիճը, այդտեղ գումարված հայ հասարակութեան մի քանի անդամներ թոյլտւութիւն խնդրեցին մի քանի րօպէ զբաղեցնել նրա ուշադրութիւնը Գանձակի նոր աղէտով։ Բացատրելով թէ ժողովուրդը հաւատ չունի դէպի տեղական իշխանութիւնները և մանաւանդ դէպի գեներալ Տախայշվիլին, խնդրեցին ուղարկել Գանձակ իր օգնական Մալամային, որի հեղինակութիւնը և բարձր դիրքը կարող են ազդել թուրք ամբոխի վրա և, վերջապէս, գեներալ Մալաման կարող կը լինի աւելի կտրուկ կերպով կազմակերպել զօր ի օգնութիւնը։ Ընդունելով այդ խնդիրքը՝ յայտնեց, որ գեներալ Մալաման կը գնայ Գանձակ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՕՏ

Ուրբաթ, նոյեմբերի 18-ին Բագուի նաւթարդիւնաբերողների կողմից եղած պատգամաւորութիւնը, բաղկացած 9 հոգուց, ներկայացաւ Կովկասի Փոխարքային։

Ի նկատի ունենալով, որ որոշված է հաստատել նաւթային շրջանի, այն է Բագու քաղաքի, Բալախանիի և շրջակաների համար առանձին քաղաքապետութիւն (градоначальство), որին կից պէտք է լինի մի խորհուրդ,—բաղկացած 10 հոգուց, 5-ը կառավարութիւնից նշանակված, իսկ 5-ը նաւթարդիւնաբերողներից:

Ժողովի խորհրդի պատգամաւորութիւնը խնդրում է փոխարքային լայնացնել այդ խորհրդի իրաւասութեան շրջանը և ուժեղացնել նրա կազմը:

Փոխարքան առաջարկեց մտցնել խորհրդի կազմի մէջ և բանւորների ներկայացուցիչներին: Պատգամաւորները միաբերան հաւանութիւն տուին: Փոխարքան խոստացաւ, որ խորհրդի կազմը կը լրացնվի նաև քաղաքի ներկայացուցիչներով և նրա իրաւասութեան շրջանը կընդլայնվի:

ՀՐԱՒԷՐ

Այս տարւայ ապրիլ ամսին Թիֆլիսում գումարված հայկական համագումարի կողմից ընտրված բիւրօն հետևեալ հրաւէրն է ուղարկել Ռուսաստանի հայ համայնքներին՝ հրաւիրելով պատգամաւորներ ուղարկել երկրորդ համագումարի համար, որ նշանակված է այս տարւայ դեկտ. 24-ին:

Երբ այս տարւայ փետրվարի 18-ին հրատարակվեց Ռուսաստանի Կայսրի ուկազը, որով իրաւունք տրվեց ժողովներ կազմել և կարծիքներ յայտնել, Կովկասի հայ ժողովուրդը ևս, օգտվելով այդ իրաւունքից, ապրիլ ամսում Թիֆլիսում գումարեց Կովկասի հայ ժողովրդի ներկայացուցիչների առաջին ժողով, Ռուսաստանի հայ ազգի կարիքները և ցանկութիւնները քննելու համար: Այդ առաջին համագումարին մասնակցում էին 82 ներկայացուցիչներ՝ 24 քաղաքային և գիւղական հասարակութիւններից, ինչպէս և զանազան ազգային հաստատութիւններից: Համագումարը ընտրեց 16 հոգուց բաղկացած մի բիւրօ, որի կայանը Թիֆլիսումն է, տալով նրան իրաւունք ուժեղացնել իր կազմը ձեռնհաս անձանց գործակցութեան հրաւիրմամբ և յանձնեց նրան հետևել հայ ազգի կեանքի մէջ երևացող կարևոր դէպքերին, և անհրաժեշտ դէպքում՝ գումարել երկրորդ համագումար:

Բիւրօն իր վերջին նիստերից մէկում, ի նկատի ունենալով որ հայ ազգի կեանքի մէջ վերջին դէպքերը—այն է եկեղեցական և դպրոցական գոյքերի վերադարձումը, հայ դպրոցների վերաբացման թոյլտւութիւնը, արիւնահեղ ընդհարումները թուրքերի և հայերի մէջ և Թիւրքիայի մեր եղբայրների թշուառութիւնը և վերջապէս հոկտ. 17-ի մանիֆեստը—առաջ են բերել մի շարք կարևորագոյն հարցեր, որոնց քննութիւնը և լուծումը անյետաձգելի է, գտաւ, որ հասել է րոպէն՝ գումարել երկրորդ համագումարը և այդ նպատակով ընտրեց 5 հոգուց բաղկացած մի կազմակերպիչ մասնաժողով (պ. պ. Ա. Խատիսեան, Տ. Յովհաննիսեան, Հ. Առաքելեան, Ա. Արասխանեան և Ե. Թոփչեան), որին և յանձնեց գումարել ժողով և ուղարկել բիւրօի նշանակած օրակարգի հարցերը:

Որոշելով գումարել համագումարը այս տարւայ դեկտեմբերի 25-ին, բիւրօն դիմում է ձեզ, խնդրելով ընտրել տալ ձեր շրջանից... պատգամաւոր, որոնք պէտք է Թիֆլիս գալին ոչ ուշ—քան դեկտեմբերի 24-ը:

Ընդ սմին բիւրօն պէտք է համարում յայտնել, որ ընտրութիւնները պէտք է կատարվեն ծխական սկզբունքի հիման վրա, այսինքն ծխականները պէտք է ընտրեն ընտրողներ, որոնք հաւաքվելով գաւառի կենտրոնավայրում ընտրում են պատգամաւորներ, հաշվելով ամեն 5000 հոգու վրա մի պատգամաւոր:

Համագումարի զբաղմունքի օրակարգի համար արված են հետևեալ հարցերը.

1) Հայ-թուրքական յարաբերութիւնների բարւոքման միջոցներ.

2) Ռուսահայերի վերաբերմունքը դէպի հոկտ. 17-ի մանիֆեստը և քաղաքական նոր հայ կուսակցութիւն:

3) Ազգային, կուլտուրական և տնտեսական գործունէութեան կազմակերպման միջոցները.

4) Եկեղեցական կալուածների բարեկարգութեան հարցը:

Խնդրելով քննել ձեր տեղական ժողովներում այս օրակարգի հարցերը—համագումարի մէջ աւելի մանրամասն զարգացնելու համար, բիւրօն յայտնում է, որ կարելի է առաջարկել և օրակարգի նոր հարցեր—միայն ընդհանուր նշանակութիւն ունեցող, որը պէտք է ուղարկել բիւրօին մինչև դեկտեմբ. 15-ը: Ընտրված պատգամաւորները պէտք է իրանց հետ բերեն անպատճառ իրանց ընտրութիւնը վաւերացնող արձանագրութիւնները:

Բոլոր հարկաւոր տեղեկութիւնների մասին կարելի է դիմել նամակով կազմակերպիչ մասնաժողովին այս հասցէով.—г. Тифлисъ. Гановская ул. д. № 15. Доктору Ал. Ив. Хатисову.

Բիւրօյի անդամներ—Աղայեան Ղազարոս, Ամիրխանեան Յովսէփ, Արասխանեան Աւետիք, Արղութեան Յովսէփ, Թոփչեան Եղիշէ, Թումանեան Յովհաննէս, Լիսիցեան Ստեփան, Խատիսեան Աղէքսանդր, Մելիք-Ադամեան Սոկրատ, Մելիք-Ազարեան Ալէքսանդր, Յովհաննիսեան Տիգրան, Սահակեան Աւետիք, Սարգսեան Լեւոն, Սպենդիարեան Յովհաննէս, Ստեփանեան Կարապետ (բժ.), Քալանթար Ալէքսանդր:

Գործակից անդամներ՝ Առաքելեան Համբարձում, Յարութիւնեան Սամսոն:

ԹՈՒՐՔ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ

«Մշակ»-ի 224 համար թերթին մէջ կարդացի յայտնի ֆելիէտոնիստ Դորօշևիչի «Թուրք նահանգապետը» վերնագրով «Русское Слово»-ի մէջ գրածը:

Տաճկաստանի և տաճկական պաշտօնէից նկատմամբ շատ անգամներ կարդացած ենք այդ օրինակ գրուածքներ եւրոպական և ռուսական թերթերու մէջ և դիտած ենք, որ կարեւորութիւն չունեցող սխալութիւններէ ազատ չեն անոնք. այս անհոգութիւն որ ի հարկէ անուշադրութեան արդիւնք է, բայց ունի իր վնասակար կողմերը:

Տաճկական հերքումները, որ անպատկառ են, մեծապէս կ'օգտուին այդ օրինակ մանր և անկարևոր սխալութիւններէ, կարժէ արդեօք ուղղել զանոնք:

Պ. Դորօշևիչ՝ Տրապիզոնի նահանգապետ Գատրի բէյը, որ 95-ի կոտորածներու ծրագրողն է, Ռէշիդ բէյ է անուանում: Գատրի բէյի սխրագործութիւնները մի այլ անգամ կը խոստանամք գրել և առ այժմ բաւականանանք անոր մասին այսչափ մը յիշել, որ նա ևս Ռաշիդէ աւելի արուեստով մ'էր...

Ռաշիդ բէյ ըսածը, որ կոտորածի ժամանակ իբր սուլթանին շատ հաճելի ընթացք մը ունեցած է, կոտորածէն յետոյ ի վարձատրութիւն իւր ծառայութեանց—հայասպանութեամբ—փաշայութեան բարձրացաւ. առ ժանդարմի գնդապետ է մինչև օրս. Ռուսաստանից փախած աւազակ մ'էր, որ երբ գաղթական, Աճառայից գացած Թիւրքիա, և որովհետև այդ գաղանաբարոյ մարդը անզուգական էր, սուլթանական բռնապետութիւնը ժանդարմայի շրջանակին մէջ ի պաշտօն կոչեց զայն:

Պ. Դորօշևիչի յիշած դաժանակրութեան պատասպարուած անձը այս Ռաշիդ բէյն ալ չէ. այլ անոր որդին, որ դժբաղդաբար մոռացած եմ անունը:

Ռաշիդ բէյը Տրապիզոնի կոտորածէն յետոյ երբ կը տեսնէ, որ իր ծառայութիւնները գնահատված են սուլթանից, հեռագրով կաղերսէ, որ իր որդւոյն պատիժը ներվի. սուլթանը ոչ միայն կը ներէ, այլ նաև այդ դաժանակրութեան պատասպարուած չարագործ մարդասպանն ժանդարմի հազարապետ տիտղոսով կը ղրկէ Սեբաստիա, ուր այս վերջինն ալ բաղդ կունենայ Սեբաստիոյ կոտորածներուն մէջ իր քաջութիւնները ցոյց տալու սուլթանին և կարժանանայ գնդապետութեան աստիճանին...

Տրապիզոնի կոտորածներուն հեղինակութիւնը ոչոք կրնայ խլել երկու տարի առաջ գետին անցնող Գատրի բէյէն: Իրեն գլխաւոր խորհրդակիցներն էին յիշված պատմական Ռէշիդ բէյը, Նէժմի օղլի հաճի Օսմանը (չը շփոթենք միւս Նէժմի զադէների հետ, որք գոնէ չեզոք էին այդ դժոխային գործոց մէջ) և այլ մի քանիներ:

Եթէ գետնին տակ մտնող Գատրին մի կաթիլ մարդու արիւն և խիղճ ունենար ու չխրախուսներ սուլթանի այդ դժոխային հրամանը, ինչպէս ըրաւ նոյն ժամանակ Սամսոնի կառավարիչն, ներքին գաւառներն ալ չը պիտի համարձակէին կոտորած սարքել և այս՝ մեզ համար գոնէ բացարձակ ճշմարտութիւն մէկ և պատեհ առթիւ մը կը խոստանամք մանրամասն բացատրել:

Գատրիի, Ռէշիտի, ասոր որդւոյն և Նէժմի հաճի Օսմանի նկարագիրներն, զգացումներն, և արարքներն մի կաղապարէ ելած են կարծես, իսկ սոանց բոլորովին հակառակն էր Սամսոնի կառավարիչ բէյը, որուն համար անհունապէս շնորհապարտ մնացած են Սամսոնի հայերը. նոյն չափով շնորհակալ եղած են նաև Սամսոնի Նէժմի օղլին, որ մինչ՝ այսօր ալ խաղաղութեան և կուլտուրայի կուսակից մէ ու սիրելի ամեն դասակարգի:

Յ. Յ. Շ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

(Նամակ խմբագրութեան)

«Մշակ»-ի 228-րդ համարի «Մամուլի»-ի բաժնում, մէջ բերելով սօց.-դեմ. բան. հայ կազմակերպութեան օրգան՝ «Սօցիալիստ»-ի պատասխանը «Դրօշակ»-ին, խմբագրութիւնը հետևցնում է այդ պատասխանից, որ իբր թէ հայ սօցիալ-դեմօկրատները, Թուրք-հայկական ջարդերի մէջ, առաջնակարգ նշանակութիւն են տալիս միայն տնտեսական հանգամանքին: Սակայն դա թիւրիմացութիւն է, որը կարծում ենք, բղխում է «Սօցիալիստ»-ի Թուրք-հայկական յարաբերութիւններին նուիրված, նախկին յօդուածների հետ ծանօթ չը լինելուց:

Հայ սօցիալ-դեմօկրատները ոչ պակաս նշանակութիւն են տալիս և կառավարութեան խաղացած դերին, որոշ չափով նրանք մեղաւոր են համարում նաև հայ նացիօնալիստ կուսակցութիւններին:

Որպէս զի «Մշակ»-ի ընթերցողները մի ամբողջ և լրացած գաղափար կազմեն հայ սօցիալ-դեմօկրատների հայեացքների մասին՝ դէպի Թուրք-հայկական ջարդերը, մենք թոյլ ենք տալիս մեզ՝ առաջ բերել այստեղ մի քանի քաղուածքներ «Սօցիալիստ»-ից: Յոյս ունենք, որ խմբագրութիւնը անաչառ լինելու համար, կը զետեղէ այս «Մշակ»-ում:

«Սօցիալիստ»-ը Թուրք-հայկական ջարդերի մէջ կառավարութեան խաղացած դերը բնորոշում է հետևեալ ձևով:

«Հայերի դէմ և գլխաւորապէս հայ գիւղացիների, արհեստաւորների և բանւորների դէմ, ինքնակալական կառավարութիւնը հանել է մահմեդական հասարակութեան խաւար բազմութիւնները. տուել է սրանց ձեռքը զէնք և գնելով իր ոստիկանութեան և զօրքի հովանաւորութեան տակ, արձակել է հայերի վրա:—Ասում եմ հայ գիւղացիների, հայ բանւորների և արհեստաւորների դէմ գլխաւորապէս, որովհետև ամենամեծ զոհը տալիս են սրանք, ամենամեծ բռնութեան ենթակայ են սրանք:

«Սա ինքնակալութեան քաղաքականութիւնն է, և ոչ միայն հայերի, այլ և հրեաների, լեհերի վերաբերմամբ, որոշ չափով և ռուսների վերաբերմամբ:

«Այո, քաղաքականութեան էութիւնն է ըստեղծել ազգաբնակութեան ծոցում մէկը միւսի դէմ մարտնչող ույժեր, նրա զանազան մասերի մէջ թագուն ներհակութիւնը կեանքի կոչելով, շահագործելով և սուր կերպարանք տալով ամեն մի թիւրիմացութեան, որ կարող է գոյանալ այդ նոյն մասսաների մէջ՝ սրանց ամենօրեայ փոխադարձ յարաբերութեան մէջ»:[1]

«Յեղափոխական շարժումից խեղդուող կառավարութեան համար բոլոր միջոցները լաւ են յեղափոխութիւնը ճզմելու համար, այդ միջոցներից մէկը ջարդերն են:

«Ջարդերի ենթարկել հասուն, գիտակից ժողովուրդը, կառավարութեան տեսակէտից, նշանակում է բանի տալ ձեռք վերցնել յեղափոխութիւնից, ակամայ քշել իր միջից յեղափոխական տարրերը, յուսահատ ապաւինելու կառավարութեան: Ժողովուրդը ջարդել, կը նշանակէ՝ յանկարծակիի բերել յեղափոխական տարրերը, սպառել նրանց ույժերը ջարդերի մէջ, զբաղեցնել ժողովրդին պաշտպանութեան, ապահովութեան խնդրով, յուսահատեցնել նրանց և այդպիսով չէզոքացնել վտանգաւոր տարրերը, որոնց սարսափն աւելի է դողացնում ինքնակալութիւնը, քան եապօնական զօրագնդերը ու հռչակաւոր զրահակիրները»:[2]

Բացի սրանից, սօց.-դեմ. բան. հայ կազմ. կենտրօնական կօմիտէի յանձնարարութեամբ, «Սօցիալիստ»-ի խմբագրութեան փրանսերէն լեզուով տպած մի կոչի մէջ, ուր ուղղած էր բոլոր երկրների պրօլետարիատին, պարզապէս ասված է հետևեալը.

«Արիւնահեղ ինքնակալական կառավարութիւնը չը գոհանալով այն հալածանքներից, որ անդադար ուղղել է մեր դէմ այն պարզ պատճառով, որ մենք պահանջում ենք անընկճելի կորովով տնտեսական և քաղաքական մեր կացութեան բարելաւումը, կացութիւն, որ դժոխային է, չը բաւականանալով դրակոնական միջոցների մի ամբողջ սիստեմով, որ նա ստեղծել է հայ պրօլետարիայի յեղափոխական և սօցիալիստական շարժումը խեղդելու, թուլացնելու և ջարդելու Կովկասի միացած ազգերի պրօլետարների շարժումը, կղզիացնելով այս, և վերջ դնելու այդպիսով այդ երկրի աշխատաւորների քաղաքական ձգտումներին, հերիք չէ, որ նա լցրել է իր բանտերը մեր յեղափոխական երիտասարդներով, որ թափել է իր զազան գործակալների ձեռքով յորդ գետեր մարդկային արեան, որ աւերել է մեր գիւղերն ու քաղաքները, չը յագեցած ասում ենք, այդ ամենից, ինքնակալ կառավարութիւնը բարձրացրել է մեր դէմ մահմեդական հասարակութեան անգիտակից բազմութիւնները: Նա զինել է նրանց, հրահանգում և ուղղում է հայոց դէմ[1]:

Այսքանը, կարծում ենք, բաւ է որպէս զի կարելի լինի դատել, թէ որքան մեծ նշանակութիւնն են տալիս կառավարութեան խաղացած դերին հայ սօցիալ-դեմօկրատները:

Այժմ մի երկու ցիտատ էլ մեր նացիօնալիստների վերաբերմամբ:

«...Ամբողջ քսան տարի, եթէ ոչ աւելի, մեր հասարակութեան բոլոր խաւերը տուել են հայ բուրժուազիայի ձգտումներով:

Կազմակերպվել են մեր յեղափոխական կուսակցութիւնները (Նացիօնալիստ), որոնք ծագումով այդ նոյն բուրժուազիայից լինելով, անկարող են եղել հրաժարվել նրա խոշոր ազդեցութիւնից, այլ ընդհակառակը, կոչված են եղել իրագործելու հայ բուրժուազիայի զարգացման, հայ կապիտալի զարգացման, աճող պայմանները՝ քաղաքական ինքնուրոյնութիւնը: Եւ որովհետև թէ լեգալ կեանքը, իր բոլոր արտայայտութիւններով (կուլտուրական և այլն), թէ իլլեգալ, յեղափոխական գործունէութիւնը, հենված են եղել հայ կապիտալի՝ հայ բուրժուականութեան շահերի վրա, անկարելի է եղել ստեղծել որ և է կապ, որ և է մերձեցում մեր հարևան ժողովուրդների հետ: Ընդհակառակը՝ անցեալ պատմութեան մէջ եղած ընդհարումները մեր և, օրինակ, մահմեդականների մէջ՝ վերարձանագրել և թարմացրել են մեր բուրժուա գրողները և այդպիսով աւելի ևս արմատացրել մի բարբարոս անջատում մեր և մեր հարևանների մէջ: Այսպիսով ստեղծվել է մի սարսափելի մթնոլորդ, ուր ամեն հայ «ազգասէր» պարտականութիւն է համարել հաչելու մահմեդականին թշնամի, վրացուն ծոյլ, ջհուդ, անխելք մի տարր, որը գուցէ լաւ է միայն շահագործութեան համար[1]»:

Հայ սօցիալ-դեմօկրատները Թուրք-հայկական ջարդերի մէջ տեսնում են մի շարք հանգամանքներ, մի շարք պատճառներ, որոնք իրանց կարգին լուսաբանված են «Սօցիալիստի» էջերում.

Հայ սօց.-դեմօկրատ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

(Պատկեր)

Իբրև գարնանային կենսատու քամին, որ յանկարծ սօսափիւն է առաջ բերում նոր կանաչած անտառի սաղարթում և սարալանջերի խոտերն օրօրելով, անցնում գնում է և համբուրում սառուցեայ զրահից նոր ազատված կապուտակ լճակի կուրծքը, ալիքելով ու ալեկոծելով մինչև այն մեռած ու տափակ ջրի մակերևոյթը,—ահա նա՝ տենչալի ազատութեան լուրը կերպարանափոխեց մեր դալկացած հասարակութեան բոլոր խաւերը:

Աշնանային օրը, կարծես, ցանկանում էր մարդկանց ուրախ սրտերի տրամադրութեան հետ ընթանալ: Երկինքը պարզ, օդը խաղաղ, արևը մեղմ ջերմութիւն է սփռում ամենուրեք:

Ահա փողոցի ծայրին երևաց մարդկանց մի խումբ. ամեն ազգութեան, ամեն հասակի աշխատաւորներ են: Բազմաթիւ կարմիր դրօշակները ծածանում են օդի մէջ: «Ազատութիւն», «Սահմանադրութիւն», «Խօսքի ազատութիւն» և այլ մակագրութիւնները հազիւ հազ ընթեռնելի են երերվող լաթերի վրա: «Մարսելյէզը» եղանակով երգում են մի ինչ-որ երգ և կարգապահութեամբ առաջ ընթանում:

Ճանապարհին նորանոր խմբակներ իրանց դրօշակներով միանում են նրան և խումբը գնալով աճում է աճում, իբրև ձիւնապատ սարալանջից թաւալվող ձիւնագունդը:

—Ընկերներ, կանգ առնենք այստեղ,—դիմեց ամբոխին դրօշակակիրներից մէկը, երբ նրանք մօտեցել էին մի մեծ տան առջև գտնվող քարէ սանդուղքին:

Դրօշակակիրները վեր բարձրացան սանդուղքը, մնացածները շարքով կանգնեցին փողոցում:

Ամբոխից դուրս եկաւ կապտագոյն բլուզ հագած մի արհեստաւոր, բարձրացաւ սանդուղքի վերևի աստիճանը, գլխարկը հանեց և գոչեց.

—Ուռա, ընկերներ, այսօր յաղթանակի օր է... ուռա...:

Բազմահազար ժխորը միաձայն «ուռայով» թնդացրեց օդը: Դիմացի տների պատուհանները բացվեցան, կանացի հետաքրքրվող գլուխներով զարդարեցին պատկերը:

«Ընկերներ, շարունակեց մի և նոյն բանւոր-հռետորը, այսօր հեռագրական հաղորդագրութիւնից իմացած կը լինէք, որ մենք արդէն ստացել ենք սահմանադրութիւն, իսկական սահմանադրութիւն: Այժմ մենք իրաւունք ունենք ազատ խօսելու, ազատ ժողովվելու ուր որ էլ ցանկանանք, և ոչ մի ոստիկան, ոչ մի կազակ այլ ևս մեզ խանգարել չէ կարող»:

Եւ իրաւ, ոչ ոք նրանց չէր խանգարում, ոչ ոք նրաց վրա հրացաններ չէր արձակում: Մի քանի միրուքաւոր զինւորներ, երևի պահեստի զօրաբաժնից իրանց հրացաններին յենված, ուշի ուշադրութեամբ ականջ են դնում հռետորին: Մի կազակ, հրացանը թամբի վրա պատրաստի պահած, կաշւի պայուսակը ձեռումը, երևի մեծաւորին պաշտօնական թղթեր է տանում, ձիուց կռացել է և լսում է իր ականջների համար խորթ մտքերը:

Հռետորը գնալով տաքանում է: Նա եռանդով պաշտպանում և գովաբանում է աշխատաւոր դասակարգի արդար դատը, քննադատում է քաղաքական ծրագիրները և մէկ-մէկ նոր ման գալ սովորող մանուկի պէս գայթում է ու սայթաքում իր արտայայտած մտքերի մէջ:

Է՛հ, փոյթ չունի. ժամանակը նրան աւելի հասուն կը դարձնի: Չէ՞ որ երեխան լաւ քայլել չի սովորի, մինչև որ յաճախակի վայր ընկնելուց նրա գլուխը մի քանի անգամ չը պատռվի:

Նոր-նոր մարդիկ շարունակ միանում են խմբին կամ ջոկ կանգնած հռետորին լսում են: Մօտակայ նեղ փողոցից երևաց մի կարճահասակ ու լայնաթիկունք բանւոր, հաստ գաւազանը ձեռքին: Հէնց որ նկատեց կարմիր դրօշակները, նա յանկարծ արձանի պէս կանգ առաւ տեղնուտեղը, աչքերը չռեց և գաւազանը գետին խփելով.

—Անզգամներ, պոռաց նա, և երեսի վրա գետնին փռվեց:

Պահ մի մնաց նա այդպէս, չէկ լայն միրուքը փողոցի փոշու մէջ ձգած:

Յանկարծ նա տեղից ցատկեց, ձեռքի փայտը բարձրացրած, օրօրվելով վազեց դէպի ամբոխը: Ընկերները նրան ամուր բռնեցին և արգելեցին տեղից շարժվելու:

—Խմած է մի քիչ, ժպտալով նկատեցին նրանք:

—Հայերը ռուսների հետ միացել են և պէտք է Թուրքերի վրա յարձակվեն, կամացուկ փսփսաց մօտս կանգնած թուրքն իր ընկերոջը, և երկուսը միասին հեռացան այդտեղից:

Ամբոխի մէջ այլ ևս թուրք չէր երևում:

Հռետորը վերջացրեց իր խօսքը, դրօշակակիրներն անցան խմբի առաջ, երգը թնդաց և մարդկային ալիքներն թաւալեցին անարգել:

Փողոցում մնացին մի քանի հասարակ բանւորներ «արխալուխներ» հագած, երևի Ռուսաստանից նոր են եկել:

—Այն շապկաւորին ինչու չը ձերբակալեցին, որ «կուտուզկա» նստացնեն, բարկութեամբ ասաց մի հաստավար մուժիկ:

—Մեր դրօշակը սպիտակ է, աւելացրեց միւսը, կարմիր դրօշակները մեզ համար հաճելի չեն:

—Բեւր, այդ ինչ եղան վախկոտութիւն է կարմիր գոյնից,—հեգնութեամբ հարցրեց մի երիտասարդ արհեստաւոր: Ձեզ ազատութիւն են տուել, և դուք դժգոհ էք, շարունակեց նա:

—Այդ քեզ ո՞վ հաղորդեց:

—Չէ՞ք հասկանում... Դէ, հինգ կօպէկ տուէք և գնեցէք մի լրագիր համար: Այնտեղ մի արշինանոց տառերով տպագրված է. «սահմանադրութիւն», որ ազատութիւն է նշանակում:

—Կեղծիք չը լինի՞ այդ թուղթը, յամառութեամբ շարունակեց գիւղացին:

—Լա՛ւ: Ապա նահանգապետն էլ է կեղծում, երբ իր տան առջև հաւաքված ժողովրդին շնորհաւորում է «ազատութեամբ»:

—Դրամն ամենքին կարող է կաշառել, խուլ կերպով մրթմրթաց յամառ գիւղացին:

—Եղբայրներ, այդ բոլորը հայերի գործ է, բացականչեց նոր եկած պինջակաւոր մի մարդ, անշուշտ սև հարիւրակին պատկանողներից մէկը, հէնց կարմիր դրօշակների տակ խօսողն էլ հայ է:

—Ոչ, սխալվում էք, պարոն, հակառակեց երիտասարդ բանւորը, ես նրան լաւ եմ ճանաչում՝ իսկական ռուս է, Մոսկվայի նահանգից:

—Ես նրանց... հայհոյեց խուլիգանը.—կոտորածի ժամանակ չէ՞ որ հայերն ունէին հրացաններ, ռումբեր, խանչալներ, ատրճանակներ, իսկ թուրքերն ոչինչ չունէին... Ահա ինչ են հայերը, ասաց նա և գաւազանը ճօճացնելով գնաց խմբի ետևից:

«Կեցցէ ազատութիւնը» հեռուից լսվում էին ամբոխի բացականչութիւնները...

Մխիթար

ԾԽԱԽՈՏ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՍՈՒԽՈՒՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ահա լրանում է քսանհինգերորդ տարին այն ժամանակվանից, երբ Սինոպի, Սամսոնի, Օրդուի և Տրապիզոնի կողմերից հայկական մի մասսա դիմում էր դէպի աւետեաց երկիրը, Սև ծովի հիւսիսային ափերը, քրիստոնեայ Կայսրի «բրահմի մէջ մեքէթը»:

Ութսունական թւականների գաղթականները, մանաւանդ Սինոպի կողմերից գաղթածները, թրքական հալածանքի չեն ենթարկվել. դեռ չեն մոռացել իրենց բնակութեան վայրերում վայելած հանգստութիւնը:

Այլ պայմաններում են գաղթել տրապիզոնցիները. նրանք ենթարկվել են թիւրքահայի դառն ճակատագրին: Նրանք մերկ ու ոտաբոբիկ գաղթականներ էին, զրկված էին օրեկան պարէնը հայթայթելու միջոցից. բայց այժմս բոլորովին այլ տպաւորութիւն են թողնում: Կարճ ժամանակամիջոցում նրանք թափ տուեցին գաղթականութեան փալանը և նոյնիսկ աւելի լաւ պայմաններ ստեղծեցին իրանց համար, քան թէ իրանց միւս գաղթական եղբայրները, և այս ամենը շնորհիւ իրանց տոկուն աշխատութեան և աշխատանքի արդիւնքի արժանիքի գնահատութեան, որով տրապիզոնցին բարձր է իր միւս գաղթական եղբայրներից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

IV

Կովկասը անցկացրեց դաժան ռուսացման ժամանակը, որ առանձնապէս ծանր էր հայերի համար, իբրև մի ժողովրդի, որ միւս տեղական ցեղերից աւելի կուլտուրական և ազգայնապէս ինքնաճանաչ էր: Ռուսացման ընդհարումները հայկական առանձնացման հետ կապիտալիստական և մանաւանդ կրօնական հողի վրա, կարծես սատուրային արդարացում էին տալիս այն նախապաշարումներին, որոնցով ղեկավարվում էր Ստամբուլից խաբված պետերբուրգական բիւրոկրատիան երկու վերջին թագաւորութիւնների ընթացքում: Նա ընդունեց Հայաստանը իբրև ամեն տեսակ յեղափոխական սպառնալիքների օջախ, և Անդրկովկասի փրկելը յանձնվեց իշխ. Գոլիցինի երկաթէ գաւազանին:

Գոլիցինեան դաժան ռէժիմը ոչ միայն չը խաղաղեցրեց Կովկասը, այլ մի շարք միջոցներով, որոնք արդարացնում էին հայերին երկրի ուրիշ ազգութիւնների առաջ, հասցրեց այն հետևանքին, որ այդ ժողովրդի մէջ, որ դեռ քիչ առաջ, մեծ իշխան Միխայիլ Նիկոլաեւիչի և իշխան Դօնդուկով-Կորսակովի կառավարչապետութեան ժամանակ, համարվում էր ամենաօրինապահ և պահպանողականը, ամենից ամուր յենարանը ռուսաց իշխանութեան համար Անդրկովկասում, ճիշտ որ սկսվեց շարժում: Տեսնելով իր առջև դէմ առ դէմ ազգային յեղափոխութեան հնարաւորութիւնը և մի և նոյն ժամանակ չը կամենալով վերացնել այն միջոցները, որոնք առաջ էին բերում և զարգացնում էին հայկական անբաւականութիւնը, կովկասեան ադմինիստրացիան սկսեց որոնել տեղական այնպիսի տարրեր, որոնք յօժար և ընդունակ կը լինէին դուրս գալ «սեպարատիզ» ապստամբութեան: Հայերի բնական հակառակորդ ժողովուրդ Կովկասում վրացիներն են, բայց հակառակ այն եռանդուն քննութիւնների, որ թափում էր նրանց առջև տխրահռչակ հայատեաց հրապարակախօս Վելիչկօն, հակառակ այն կոկորդիլոսեան արտասուքների, որ թափում էր նա, պաթետիկ կերպով ողբալով Վրաստանի ստրկացումը հայկական կապիտալի ձեռքով—երկու ժողովրդների մէջ երեւան եկան կուլտուրական շփման չափազանց շատ ընդհանուր կէտեր, այնպէս, որ նրանց արտաքին, մակերևոյթային առանձնացումը չէր կարող դուրս գալ լուրջ քաղաքական կռւի ցեղ ցեղի դէմ: Դրա համար աւելի շատ փաստեր տալիս էր ցած կուլտուրայի մի ժողովուրդ, որ բացի դրանից մահմեդական էր—թուրքերը: Անդրկովկասի քրիստոնեայ ազգերի գլխաւոր թշնամիներ, որոնք կապվել էին միայն ռուսական նուաճումներով, խաղաղ էին միայն այնքան, որքան ռուսաց զինւորական ույժը ներկայ էր Անդրկովկասում: Նրանք մանաւանդ դէպի հայերն են լցված առանձին ատելութեամբ. այդ ատելութեան մէջ տեղ ունեն տնտեսական և կրօնական պատճառները, բայց նրա գլխաւոր հիմքը օրգանական է, ժառանգական, ցեղային[1]:

Մահմեդական անարխիան Անդրկովկասում սկսեց աւազակութեան անհատական դէպքերով[2] և այնուհետև աւազակութիւնը, տեղական իշխանութիւնների անգործութեան կամ թուլութեան պատճառով, շատ շուտով ընդունեց Գանձակի նահանգում սօցիալական համաճարակի բնաւորութիւն և չափեր: Միւնոյնժամ աչքի էր ընկնում մահմեդական աւազակային «ասպետութեան» պարզ արտայայտված հայատեացութիւնը: «Ասպետութիւն» անունը տեղն է, քանի որ խմբերի կազմակերպութեան մէջ մասնակցութիւն ընդունում էին, գլխաւորապէս, թուրք կիսավայրենի ազնուականութեան ներկայացուցիչները, «բէկերը», որոնց գրաւում է դէպի աւազակութիւն կամ կարիքը, կամ արեան վրէժը, կամ պարզապէս քաջագործութիւնների տենչը: Ամենանշանաւոր աւազակներից մէկը, Մուրդակուլով, նոյն իսկ վերջացրել է Գանձակի գիմնազիայի դասընթացը: Անսովոր քիչ էր պատահում, որ թուրք աւազակը փորձէր յարձակվել ռուսի վրա, և անդրկովկասեան աւազակութեան փոքրաթիւ ռուս զոհերը սովորաբար սխալմամբ էին մահանում, նրանց ընդունել էին հայի տեղ:

Այս սիստեմը, որ ծածկում էր միայն ասիական զգուշութիւնը—այն է, չը կատաղեցնել, մինչև մի առ ժամանակ ռուս իշխանութիւնները անմիջական և անձնական թշնամութեամբ—կեղծ բացատրութիւն գտաւ իբր ապացոյց, որ թուրքերը իբր թէ ռուսասէր են: Ի հարկէ այդ Քեաբիմները, Նաբիները, Մուրդակուլօֆները, Մուրադները հալածվում էին իշխանութիւնների կողմից, ինչպէս պահանջում էր ծառայութեան պարտքը, բայց մեծ մասամբ շատ անյաջող, որովհետև աւազակութեան դէմ կռւելու համար կազմակերպված թուրք չափարները շատ յաճախ մասնակից էին դառնում աւազակների հետ: Սակայն հալածանքները չէին խանգարում յայտնի ռօմանտիկական համակրանք տածելու դէպի նորագոյն Կարլ Մօօրների ույժը, որոնք որպէս թէ վրէժ էին հանում հայկական կապիտալից թուրքերի աղքատացման համար, մանաւանդ, որ նրանք այնպէս ասպետաբար խնայում են ռուսների կեանքը ու կայքը: Տարաբախտաբար չէին նկատում մի բան,—այն, որ ռուս այն գաղթականներին, ինչպէս, օրինակ, աղանդաւորները, որոնք իշխանութիւնների առանձին հովանաւորութեան տակ չէին գտնվում, այդ ռուսասէրները խնայում էին նրանց նոյնքան քիչ, որքան և հայերին:

V

Ընդունել թուրքերին իբրև Անդրկովկասի մի «յուսալի» տարր, որի վրա ռուսացումը կարող է յոյս դնել հայկական յեղափոխութեան դէպքում—դա իշխ. Գոլիցինի ամենամեծ սխալն էր: Նա մի հզօր գազանի ույժի թակարդի մէջ, այն ույժի, որ շատ վաղուց սողալով Փոքր Ասիայից անցել էր Արաքսը, որպէս զի ծածկէ Անդրկովկասը կրօնական և ցեղային մի դաւադրութեան ցանցով, որ յայտնի է պանիսլամական միութիւն անունով: Այդ կազմակերպութիւնը, որ սարքել, օրհնել և զինել է սուլթան Աբդուլ-Համիդը կռւելու համար Ռուսաստանի թուլացած ազդեցութեան դէմ Փոքր Ասիայում, գոյութիւն ստացաւ այն խակ տարիներում, երբ մենք այնքան սիրայօժար օգնում էինք Ստամբուլին: Օգնում էինք, որ նա խեղդէ ազատութեան վերջին ձայնը այն ազգի մէջ, որ XVII դարից տալիս էր բանալիներ ռուսական շարժման համար դէպի Մերձաւոր Արևելքը և որ այնքան շատ ծառայութիւններ է մատուցել Ռուսաստանին կովկասեան վաթսունամեայ պատերազմի ընթացքում և թիւրքերի դէմ մեր մղած պատերազմներում: Մեր թշնամիները մեզանից շատ լաւ գնահատեցին հայերի, իբրև Ռուսաստանի պատմական և բնական դաշնակիցների դերը: Եւ հէնց որ մեր քաղաքականութիւնը, Բալկանեան երկիրներում հիասթափվելու տպաւորութիւնների տակ, իր երեսը Մերձաւոր Արևելքից դարձրեց դէպի Հեռաւորը, սուլթան Աբդուլ-Համիդը շտապեց քարուքանդ անել և աւերել թիւրքաց Հայաստանը, իբրև պարտաւորական կայարան և յենակէտ ռուսական անցեալ և ապագայ արշաւանքների: Կուրացած համասլաւոնական գաղափարով, ոգևորված ռուսացմամբ, վախեցած «համաշխարհային սօցիալական յեղափոխութեան ուրուականներով, խաբված սեպարատիստ ցանկութիւնների կասկածներով, ռուսաց բիւրոկրատիական դիվանագիտութիւնը չը կամեցաւ հասկանալ, որ կոտորելով 300,000 հայեր Սասունում և առհասարակ Փոքր Ասիայում, սուլթան Աբդուլ-Համիդը իսկապէս ոչնչացրեց համարեա կէս միլիոն ռուսական առաջապահներ և եթէ ոչ ընդմիշտ, գոնէ տասնեակ տարիներով զրկել է մեր հայրենիքը երեք միլիոն ազգաբնակութեան սէրից և հաւատից, մի ազգաբնակութեան, որի համակրանքները այնքան առաւելութիւններ էին ստեղծում մեզ համար Փոքր-Ասիական պատերազմների բեմի վրա: Ռուսաց յարձակողական պատերազմների յաղթական աջողութիւնը նշանաւոր չափով կապված էր այն հանգամանքների հետ, որ ռուսական բանակները գտնում էին թշնամու վրա բարեկամ հողերով—Դունայի ափերում պարող սլաւոնների երկրով, հայերի երկրով, մինչև անգամ լեհական ապստամբութիւնը զսպելիս ռուսաց զօրքերը իրանց կողմն ունէին այն, որ լեհական գիւղացիները լաւ էին վերաբերվում նրանց, շնորհիւ փետրվարի 19-ի (գիւղացիների ազատութիւն): Նապօլեոնական պատերազմը հազիւ թէ առաջին փորձը չէ մի պատերազմի՝ մեզ անբարեացակամ մի երկրում, և անկասկած է, որ այդ կարևոր պայմանն էլ չը պէտք է մոռանալ այն բազմաթիւ ուրիշ պատճառների մէջ, որոնք բացատրում են ռուսական բանակների ողբերգական ջարդերը Մանջուրիայում: Կոտորելով հայերին, Աբդուլ Համիդը կոտորում է սակայն ույժը, ռուսական համակրանքները: Իննսունական թուականները մեզ համար Մանջուրիա ստեղծեցին թիւրքաց Հայաստանում: Իսկ իշխ. Գոլիցինը ջանքեր գործադրեց, որ Մանջուրիա դառնայ և ռուսաց Անդրկովկասի Հայաստանը—խաղաղ ազգաբնակութիւն ունեցող մի երկիր, որ յուսահատութեան էր հասցրված իր անկենդան իրաւազրկութեամբ և ողողված էր մահմեդական խուժանների հրոսակներով:

Ռուսացման քաղաքականութեան համար Կովկասը արդէն վճարեց Ռուսաստանի ազգային ամենակարևոր հարստութիւններից մէկի—Բագւի նաւթային արդիւնաբերութեան կորստով: Եւ ո՞վ գիտէ, այդ արդեօք հատուցման սկիզբը չէ միայն: Այսօր երբ ես գրում եմ այս տողերը, եկան ռուսաց լրագիրները և պատմում են թէ թուրքերը—Բագւի կատարեալ տէրերն են. խաղաղ պայմաններ չեն ընդունում և յայտարարում են իշխանութիւններին թէ ռուսների դէմ իրանք ոչինչ չունեն, բայց հայերին չեն ուզում. թո՛ղ հայերը հեռանան երկրից ուր որ իրանց հաճելի է, եթէ չեն կամենում նոր և նոր կոտորած: Իսկ կոտորածը, ի հարկէ, միշտ յաղթական կը լինէ թուրքերի համար, որովհետև նրանք շատ լաւ են զինված, իսկ հայի ձեռքում ինքնապաշտպանութեան զէնքը ռուսաց ադմինիստրացիայի կողմից ընդունվում է իբրև սեպարատիստական ապստամբութեան և յեղափոխական միտումների նշանաբան: Եւ այսպէս, Բագուն Կովկասում տիրապետելու այդ արևելեան բանալին, որը նուաճելու համար երեք քրիստոնեայ ազգերի—ռուս, վրացի և հայ—միացած կուլտուրաները այնքան ջանքեր վատնեցին, իրապէս նորից մահմեդական ձեռքերի մէջ է և թուրքական անարխիան վերջնագիր է ուղղում ռուսաց իշխանութեան:

Սակայն ես կարծում եմ, աւելի է «Թուրքական անարխիա» տերմինօլօգիան, որ այնքան յաճախ հանդիպում է այժմ ռուսաց մամուլի մէջ: Նա անկասկած լաւ որոշում է անկարգութեան շարունակվող քաոսը, որ արիւնով և հրով աւերում է դժբախտ երկիրը: Բայց այդ քաոսը միայն անարխիական հետևանք է այնպիսի պատճառների, որոնք գուցէ բոլորովին անարխիական չեն, այլ և շատ խիստ ղեկավարվում են և խնամքով ուղղվում: Իմ այս խօսքերը ակնարկ չեն այն մայլ լուրերի վրա, որոնք բարձրաձայն արձագանք գտան ոչ միայն արտասահմանի մամուլի մէջ, այլ և ռուսաց պրօգրեսիստ օրգանների մէջ, թէ իբր Բագւի ողբերգութիւնների անունը գիտակցաբար օրհնել է հայերին թշնամի Կովկասեան ադմինիստրացիան: Այսպիսի հնարաւորութիւնների մասին պէտք է խօսել մանրամասն, կամ ոչինչ չը խօսել[1]: Ես ի նկատի ունեմ ոչ թէ ներքին, այլ արտաքին պայմանները. այն կանօնաւոր պանիսլամական ագիտացիան թիւրքական սահմանի կողմից, որ ժամանակաւորապէս ընդհատելով դահճութիւնը իր տանը—չէ՞ որ կարելի է և մի քիչ սպասել, երբ, վախեցնելու համար, քուրդերը կոտորել են հայ ազգաբնակութեան 10%—անցաւ մեր կողմը դահճութիւն անելու, ոչնչացնելու և քանդելով այն փրկարար պահեստի ույժը, որ սուլթան Աբդուլ-Համիդի աչքում միշտ համարվել են և ճշմարիտ եղել են ռուսաց Անդրկովկասի հայկական շերտերը Թիւրքաց Հայաստանի համար: Այդ մայլ, փանատիկոսական ագիտացիան ոչ միայն անարխիական չէ, այլ ընդհակառակը, կարող է անուանվել դիսցիպլինայի օրինակ, մի բան, որ հաստատում են բոլոր, պատահաբար լոյս եկած փաստերը, ինչպէս է Գանձակի անունի դաւադրութիւնը, որ բացվեց 1899 թ-ին:

(Կը շարունակվի)

---

[1] Տես «Սօցիալիստ» № 7 «Ջարդերն Անդրկովկասում» յօդուածը:

[2] Տես «Սօցիալիստ» № 9. «Ջարդերի քաղաքականութիւնը»:

[1] Թարգմ. տես «Սօցիալիստի» № 7.

[1] Տես «Սօցիալիստ» № 7 «Ջարդերն Անդրկովկասում»:

[1] Բայց ինչ փաստեր ունի հեղինակը այսքան հաստատապէս պնդելու համար ցեղային ատելութեան մասին: Առանձնացում, հակակրանք, ի հարկէ, կայ, ինչպէս բնական է մահմեդական և քրիստոնեայ ժողովուրդների մէջ: Բայց մօտ հարիւր տարւայ մի անցեալ ցոյց է տալիս, որ կատաղի ատելութիւն երկու ժողովուրդների մէջ չէ եղել: Ծ. Թ.

[2] Աւազակութիւնը մեր երկրում գոյութիւն ունէր շատ վաղուց: Դա մի շատ հին արհեստ է. և հայերն էլ, ինչպէս նաև վրացիները, պակաս քաջագործութիւններ ու հռչակ չէին ցոյց տուել այդ ասպարէզում: Ծ. Թ.

[1] Հեղինակը գրում է այս յօդուածները արտասահմանից: Հեռուից դատողի համար ճիշտ որ հրէշային կերևայ ադմինիստրացիայի այս դերը: Բայց արիւնահեղութիւնները զգացողի տարօրինակութիւնը քանի քանի աղաղակող փաստեր ունի, որոնք ուրիշ կերպ ոչ մի բացատրութեան չեն ենթարկվում:

Չը պէտք է մոռացութեան տալ առհասարակ գաղթականութեան մէջ ընդհանուր բնաւորութիւն կրող աշխատասիրութիւնը. գիշեր-ցերեկ, տարին 12 ամիս, նա հանգստութիւն չ'ունի. Նրա երկաթէ անխոնջ բազկի առաջ ամեն տեսակ դժուար աշխատանք խոնարհվում է: Այս ամենը մեզ համար պարզ և հասկանալի կը դառնայ, երբ մենք կը մտաբերենք թէ ինչ էր ներկայացնում ողորմելի Սուխումը իր շրջանով 15 տարի սրանից առաջ: Ղիեափների (шакалъ) թագաւորութեան այս վայրը ամենակարճ ժամանակամիջոցում դարձաւ ծխախոտի մշակութեան ամենագեղեցիկ մի գաղթավայր, որը իր վրա է դարձրել արտասահմանեան վաճառականների ուշադրութիւնը. իսկ Սուխումը, գորտերի այս նեխված հայրենիքը, այժմ դարձել է մի գեղեցիկ նաւահանգիստ:

Նա մեծ դժուարութիւնների է յաղթել, բայց շնորհիւ բացառական պայմանների, իր համար ոչինչ չէ կարողացել շինել. նա զուրկ է ամենաչափաւոր ապահովութիւնից, ընդհանրապէս նա գտնվում է դառն և անելանելի վիճակի մէջ. բախտը նրան, կարծես, երբեք չէ ժպտալու այս վայրում. ներկան երբեք լաւ ապագայ չէ խոստանում. նա զրկված է հաստատուն խրճիթից, զրկված է հողից-գիւղացութեան այդ ամենագլխաւոր պայմանից: Ենթարկված է կալուածատէրերի ամենատխուր քմահաճոյքին. այսօր նա այստեղ է, բայց վաղը, ով գիտէ, կալուածատիրոջից փչած քամին որ անկիւն է շպրտելու նրան: Եւ շնորհիւ այն հանգամանքի, որ զրկված է հողից, գաղթականութիւնը այս վայրում ներկայացնում է միմիայն մի նոր ձագի, անդադար պտոյտ է անում փեթակի շուրջը և, չը գտնելով յարմար բնակարան, մնաք բարով է ասում:

Նա որոնում է իրա համար գաղթականութեան նոր վայր-Ռուսաստանում, Բուլղարիայում, Հաբէշստանում և այլն: Հայկական ճակատագիր, դառն ճակատագիր. մինչև երբ: Եւ գաղթականութեան ճանապարհում նա այլասերվում է, փչանում: Նա զրկված լինելով կրթութիւնից և արժանաւոր առաջնորդներից, ստիպված է իւրացնելու իր հետ շփված անհատների բոլոր թոյլ կողմերը և հետզհետէ նրա մէջ զարգանում է այն, ինչ որ նրա համար օտար էր իր հայրենիքում: Նա ատում էր գողին, սարսափում սպանութիւններից, բայց այժմ երևում են գողութեան նշաններ, իսկ եղբայրասպանութիւնը մեծ ծաւալ է ստացել: Չեմ կարող մոռանալ չասել կողոպուտի քաղաքավարի տեսակը, որ իր ծանր հետևանքներով վատ ազդեց մանաւանդ աղքատ «պլանտատորների» վրա և ընդհանրապէս անելանելի վիճակի մէջ գցեց բոլորին:

Վերջերս մեզ մօտ ծխախոտը վաճառվում էր հետևեալ կերպով: Երբ մօտաւորապէս ծխախոտի կէսը չորացնում էին, վաճառականը գալիս՝ գինը որոշում, տալիս էր կանխավճար՝ մօտաւորապէս արժողութեան կէսը, և այս կանխավճարը վաճառականը ապահովագրում էր՝ և հրդեհ պատահելու դէպքում ոչ ինքը՝ վաճառականն էր վնասվում և ոչ ծխախոտ արդիւնաբերողը կրկնակի վնաս ստանում՝ յետ վճարելով կանխավճարը: Վաճառման այս ձևը ունէր իր լաւ կողմերը. արդիւնաբերողը բանւորների հետ պայմանաւորվում էր մինչև կանխավճար ստանալը և թէսլիմը (доставка) և կարողանում էր, առանց նեղութիւն քաշելու, գործը վերջացնել: Բայց այս բարիքը մենք երկար չը կարողացանք վայելել. գտնվեցան մեր մէջ այնտեսակ անբարեխիղճ մարդիկ, որոնք այս բարիքը ի չարը գործ դրին:

Մանաւանդ անցեալ տարի ծխախոտ արդիւնաբերող պարոնների մի մասը, ապահովագրելով իրանց կանխավճարը, հանեցին-փախցրին ծխախոտը, վառեցին դատարկ շինութիւնները և այդպիսով մէկ տարվայ ծխախոտը 2 անգամ վաճառեցին. մեծ վնաս հասցրին ապահովագրական ընկերութիւններին: Եւ ահա այդ պատճառով այս տարի վաճառականները, որ առհասարակ առաւելութիւն էին տալիս մեր ծխախոտին և պակասորդը միայն լրացնում ուրիշ տեղերից, դեռ ևս չեն սկսել մեր կողմերում ծխախոտի առևտուրը, այնինչ ուրիշ տեղերում արդէն ծախվել են. և քանի որ կանխավճար չը կայ, ժողովուրդը խիստ նեղ դրութեան մէջ է: Թողնէ մեր անբարեխիղճ պարոնները հասկանային իրանց անարգար վարմունքը, որով խեղճ ժողովրդին մեծ դժուարութեան մատնեցին. բայց չէ, նրանք արդար են, որովհետև, ինչպէս իրանք ասում են, օրէնքի են բռնում: Բայց որքան էլ գողութիւն և աւազակութիւն անողը դատարանում արդարանայ, հասարակութիւնը նրան տալիս է արժանաւոր անունը: Ժողովուրդը շատ լաւ հասկացել է, ապահովագրական ընկերութիւն կողոպտող պարոններ, դուք էք նրան այս նեղ վիճակին մատնել և անվստահելի դարձրել յիշեալ ընկերութիւններին:

Ա. Զէյթունեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Նոյեմբերի 8-ին

Մամուլի և մարդկանց ուշադրութիւնը ներկայ դժբախտ պարագաներում կենտրոնացած է Ռուսաստանում և Կովկասում տեղի ունեցող կոտորածների վրա. ոչ ոք չէ ուզում հետաքրքրվել կենսական այնպիսի խնդիրներով, որոնք մինչև կոտորածների օրը առաջնակարգ խնդիրների շարքումն էին: Ներկայ դժբախտ տարում մարդիկ իրար կոտորում են, բայց եկող տարի սովից են կոտորվելու: Իշխանութիւնը իր անհոգ ու անտարբեր վարմունքով ապագայում մեզ համար դժբախտութիւնների դուռն է բանում:

Հայ ազգաբնակութիւնը իր ուշադրութիւնը լարել է իր կեանքի գոյքի ինքնապաշտպանութեան վրա: Կառավարութեան պաշտօնեաները իրանց տարօրինակ վարմունքով կարծես թէ երկու ազգերին էլ ցոյց են տալիս, թէ անզօր է իրեն դիմողներին օգնելու: Այս կարծիքին, ի հարկէ, չեն հաւատում իրենք կարծողները: Շատ անգամ է գրվել, որ եթէ իրերի վիճակն այսպէս շարունակվի, գաւառիս ամբողջ ազգաբնակութեանը ընդհանրապէս, և հայերին մասնաւորապէս աւելի դժբախտ ապագայ է սպասում:

Լայնածաւալ Գանձակի գաւառի սարահարթերում ապրող ազգաբնակութիւնը, քիչ բացառութեամբ, Գանձակի հրապարակում ներմուծողի տեղ—սպառողի դեր է կատարում: Նրանց կերակրել է դաշտաբնակ թուրք երկրագործ ազգաբնակութիւնը: Եթէ առաջ տարիներում, երբ գաւառիս հայերը համ իրենք են դաշտերում վար ու ցանք արել, համ սարահարթերի հողերն են մշակել, դարձեալ չեն կարողացել մի կուշտ փորով ցամաք հաց ուտել, ապա ինչ է լինելու այնպիսի թշուառ տարիներում, երբ նա մի ծիր վար ու ցանք չեն արել: Աւազակի անուան տակ գործող թուրքերի երկիւղից ոչ թէ չէ կարողանում գիւղի շրջանում գտնվող հողերը վարել, այլ չէ վստահանում անվտանգ գիւղից հեռանալ: Աւելորդ է խօսել սարահարթում ապրող հայ ազգաբնակութեան մասին, որի վարելու հողերը գտնվում են դաշտային մասում, որոնք վարած են ու յանձնված թուրք ռանչպարներին ջրելու, բայց վերջիններս իրենց հաւատակիցների երկիւղից հրաժարվում են հայերի արտերը ջրելու, չընայելով որ կէսն իրենց է պատկանում:

Բոլորովին այլ դրութեան մէջ են գտնվում դաշտաբնակ թուրքերը, նրանք իրանց կատարեալ ապահովութեան մէջ զգալով շնորհիւ իրենց անմատչելի դիրքերի ու տեղերի, էլ խամ տեղ չեն թողել, բոլոր վարելահողերը վարել են:

Մեր նահանգի եկամուտի երկրորդ աղբիւրը կազմում է գինեգործութիւնը, թէև համարձակ կարելի է ասել, որ գանձակեցիների համար գինեգործութիւնը առաջին տեղն է բռնում: Այս միակ եկամուտի աղբիւրից գանձակեցին օգտվելու փոխարէն ուղղակի վնասվում է: Գանձակեցին ինքն է գինի մատակարարում, բայց ինքն իր աշխատանքից չէ կարողանում օգտվել, օգտվողները գնողներն են, որոնք արտահանում են գինին զանազան քաղաքներ և զանազան անունների տակ՝ առասպելական գներով վաճառում:

Եւ մեզ օգտի փոխարէն, ընկնում է մի փառաւոր գերս: Չը հաւատացողները թող տեղեկանան թէ այգիների վրա ծախս է գնում և հաշվեն տեսնեն իրենց վեդրօն որքան է արժենում և որքանով են ծախել և ծախում: Մենք յաճախ ականատես ենք եղել, որ Գանձակի վեդրօն բուրլիանոց գինին, մեր քթի տակ գտնվող Բագւում, Բաթումում եռակի գներով ծախելիս: Հեռու չը գնանք, մտնենք հէնց Գանձակի հիւրանոցները և մանր գինեվաճառները. նրանք կրկնակի գներով են ծախում, միայն այգետէրերն են վնաս կրողները: Հայ այգետէրերից հազիւ կը գտնվեն մի կամ երկու անձնաւորութիւններ, որոնք կարող են այս տարվայ բերքերը պահել միւս տարվայ համար. մեծամասնութիւնը չէ կարողանում պահել կամ սպասել հետևեալ պատճառներով, նախ ամանեղէնի նեղութիւն եկող տարին գինին ածելու համար, երկրորդ փողի նեղութիւնը, շատ տեղ վերջին պատճառաբանութիւնը պէտք է դնել առաջին պատճառաբանութեան առաջ:

Ուրիշ տեղերի մագանդաւ—հրապարակային գները—կարծես թէ գանձակեցիների համար գոյութիւն չունի: Մեզանից 6—7 վերստ հեռաւորութեան վրա գտնվող իշխան Գորչակովի և նրա նախորդ կալուածատէր Գոլիցինի (նոյն երկրում նոյն հողում պատրաստած գինիները ծախում են քառապատիկ գներով:

Գինին ածում ենք տակառները և սպասում ենք, թէ երբ գինու միջնորդ Ստեփանը կամ Հաբեթը կը բարեհաճեն թիֆլիսեցի գինեվաճառ մուշտարի բերելու: Գինին չենք ծախում, առաւ, այլ մագանդայով: Մագանդան շատ անգամ որոշում են հարուստները: Նրանք ներկայումս աւելի մեծ փողի կարիք ունենալով, աշխատում են առաջին պատահած գինեվաճառին «բաց չը թողնել»: Բաւական է այս փոքրիկ քաղաքում մի Նաբաթեան կամ Սահակեան իրանց գինին որ և է գնով ծախեն, դա գնողների համար դառնում է մի մագանդա: Գինեգործութիւնը իր ընկած դրութիւնից բարձրացնելու համար առաջները շատերն են փորձել Գանձակում գինեգործական ընկերութիւն հաստատել, բայց այդ փորձերը իրականութիւն չեն դառել: Ներկայումս մի քանի բարեմիտ անձինք կամենում են այստեղ գինեգործութեան ընկերութիւն կազմել, որի համար անցեալ կիրակի օրը նախապատրաստական ժողով են ունեցել: Մենք չենք եղել այդ ժողովում, բայց որքան իմացանք, ստորագրութիւններ են հաւաքվում ցանկացողների թիւն իմանալու համար:

Գրեթէ նոյն դրութեան և տագնապի մէջ է գտնվում գինեգործութիւնը հարևան գերմանական կոլոնիաներում: Չը նայած, որ համեմատական հաշւով եթէ վերցնենք, նրանց վրա գինին աւելի էժան պէտք է նստի, որովհետև գերմանացին ինքն է իր այգին մշակում, սակայն, չը նայելով դրան, նրանք ևս դժգոհ են իրանց վիճակից: Բացառութիւն են կազմում երկու խոշոր գերմանացիները միայն:

Աւ. Սահակեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խարկով, հոկտեմբերի 8-ին

Թէև մի փոքր ուշ, բայց և այնպէս կարևոր ենք համարում մի փոքրիկ բացատրութիւն տալ «Մշակի» 191 համարում պ. Հ. Առաքելեանի նամակին այն առիթով, թէ ինչու մենք «Մշակի» 190 համարում մեր «Օգնութեան գործը» յօդուածով առաջարկում ենք թուրքական գազանութիւններին զոհ գնացած Նախիջևանի և Շարուրի հայ գիւղերին կանոնաւոր օգնութիւն հասցնելու համար ընտրել մասնաժողովներ:

Թէև «Մշակի» 190 համարը ձեռքի տակ չունենք, որ մեր առաջարկը բառացի առաջ բերենք, բայց, որքան յիշում ենք, մենք առաջարկել ենք ընտրել մասնաժողովներ Նախիջևանում, Շարուրում, Երևանում և Թիֆլիսում, որոնք իրանց ձեռքի տակ ունենալով կարևոր տեղեկութիւններ և կարիքի ցուցակագրութիւններ, համաձայն այդ կարիքների հայթայթէին գործիքներ և իրեր և նոյն մասնաժողովների ձեռքով էլ բաժանվէին գիւղացիներին: Ինչպէս տեսնում էք, իմ առաջարկած մասնաժողովները բոլորովին գործնական նշանակութիւն ունեն, մինչդեռ Թիֆլիսի, ինչպէս և Երևանի մասնաժողովները նպաստներ հանգանակող մասնաժողովներ էին, որոնց անդամները անձնական մասնակցութիւն ունենալ չէին կարող տեղում տեղեկանալու կարիքները քննելու ու իրեր գնելու կամ հայթայթելու ու բաժանելու գործի մէջ:

Ապացոյցներ շատ կան: Նախիջևանի գիւղերի դրութիւնը ուսումնասիրելու և կարիքները ցուցակագրելու համար գիւղատնտես Սահակեանը ուղարկվեց օգոստոս ամսին, մինչդեռ աւերումը տեղի ունեցաւ մայիսի 12—20-ին, ուրեմն մասնաժողովը կարիքները քննելու համար ուղարկում էր մարդ երեք ամսից յետոյ, եթէ չը հաշվենք բժշկական օգնութիւնը և փաստաբանական գործը, որը մեր առաջարկութեան հետ կապ չունի: Իսկ Շարուրի գիւղերը ուսումնասիրելու համար մասնաժողովի կողմից մինչև սեպտեմբերի վերջը ոչինչ չէր արված և այդ գիւղերի մասին մի քանի տեղեկութիւններ մենք ստացել ենք գիւղատնտես Սահակեանից նրա երկրորդ անգամ Նախիջևան գնալու ժամանակ: Այդ շրջանի համար մասնաժողովի կողմից բժշկական և փաստաբանական օգնութիւն էլ հասած չէ եղել: Ինչ վերաբերում է Դարալագեազին, ուր Ելփինը, մի ամբողջ գիւղ, աւերակների վրա է նստած, այդ անունը պ. Սահակեանը իսկի չէր էլ լսել. մենք սրանով նրան, ի հարկէ, չենք մեղադրում, բայց Թիֆլիսի մասնաժողովը պարտաւոր էր այդ իմանալ, եթէ նա պ. Առաքելեանի բերանով մեր առաջարկութիւնը համարում է գործի ձգձգում: Մենք գիտենք փաստեր, որ զանազան տեղերից ուղարկված իրեր Երևանում չը գիտէին որտեղ ուղարկել և ինչ ձևով: Որ Թիֆլիսի մասնաժողովին ուղարկած ալիւրները օրերով մնում էին Ուլուխանլու կայարանում և մարդ չը լինելու պատճառով վճարվում էր за храненіе. վերջապէս Երևանի երկու վագոն իրերը ժողովեցին, այսպէս ասած, թաղային խորհրդի ձեռքով, թէև մասնաժողով Երևանում կար:

Այս տեսակէտից միանգամայն հասկանալի է դառնում թէ ինչու Բագւի մի հարուստ, որի անունը ինձ յայտնի չէ, պ. Ե. Թագիանոսեանի միջոցով առաջարկում է մեզ յանձն առնել գործադրել կարօտեալներին 10,000 ր. մեր հայեցողութեամբ, որպէս աւերածների վայրերը անձամբ շրջող և կարիքներին ականատես եղողի, մի գեղեցիկ առաջարկութիւն, որը անկարող լինելով յանձն առնել, մենք դարձեալ մատնացոյց արեցինք գիւղատնտես Սահակեանին, որպէս կարիքների վայրը եղողի:

Միանգամայն հեռու լինելով Թիֆլիսի մասնաժողովի գործունէութիւնը և կարօտեալներին ալիւրով անմիջական օգնութիւն հասցնելը կրիտիկայի ենթարկելուց, այժմ էլ մենք կառաջարկէինք, որ դրամական օժանդակութիւնները անցնէին Թիֆլիսի մասնաժողովի ձեռքը և նա գործադրէր, կրկնում ենք, գործադիր մասնաժողովների ձեռքով, որոնց ներկայութիւնը թէ իրեր հայթայթելու և թէ բաժանելու վայրերում անհրաժեշտ է:

Սրա հետ միասին կաւելացնենք, որ պ. Թագիանոսեանը միանգամայն կատարած կը լինէր բարերարի գեղեցիկ ցանկութիւնը, եթէ այդ 10,000 ր. յանձնէր Թիֆլիսի մասնաժողովին գիւղատնտես Սահակեանի ծրագրով գործադրելու համար:

Ա.—Դօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք լսում ենք, որ ուսումնարանների ներկայ խառնակ և ալեկոծեալ վիճակից ստիպված քաղաքիս մի քանի վերատեսուչներ և տեսուչներ հրաժարական են ներկայացրել Կովկասեան ուսումնական շրջանի պ. հոգաբարձուին, սակայն վերջինս չէ ընդունել այդ հրաժարականները:

Երէկ առաւօտեան ժամը 10-ի մօտերը Թիֆլիսի «Ազով-Դոնեան» բանկի դրամ բաժանող պաշտօնեան 45,000 ր. հետը բանկից դուրս գալու ժամանակ՝ նրա վրա յարձակվեցին 4 զինված անձեր թուրքական զգեստներ հագած: Դրանք ատրճանակները բռնեցին պաշտօնեայի ճակատին, կողոպտեցին ամբողջ գումարը և կառք նստելով փախան:

«Թիֆլիսի ժողովարանը» հոկտեմբերի 22-ի արիւնահեղ դէպքերից յետոյ թէպէտ և նոյեմբերի 15-ից վերաբացվեց, բայց անդամների վրա հոկտեմբերի 22-ի գործած անլուր բարբարոսութիւնները, որի ժամանակ «ժողովարանի» պատերի մէջ զոհ գնացին նրա անմեղ և խաղաղ անդամները, այնպէս ծանր և ճնշող տպաւորութիւն են թողել, որ յաճախողներ համարեա ամենևին չը կան, և ժամի 9-10-ին միանգամայն դատարկվում է կլուբը: «Ժողովարանի» կեանքը կանգ առնելով, կանգ են առել և սիրողների հայոց ներկայացումները, որոնք այնքան ժողովուրդ էին գրաւում և լուրջ կերպարանք էին տալիս այդ հիմնարկութեան: Մենք կարծում ենք, որ «Ժողովարանի» աւագների պարտքն է՝ մի ընդհանուր ժողով նշանակել անդամների մտքերը և սրտերը խաղաղացնելու համար, կատարված դէպքերի մասին որոշ կարգադրութիւն անել ընդհանուր ժողովի հաւանութեամբ և «Ժողովարանը» նորից իր բնական ճանապարհի վրա դնել:

Նոյեմբերի 17-ին Հաւլաբարի զօրանոցների մինգրելեան զօրագնդի պահեստի զօրքերի և սպաների մէջ դարձեալ ընդհարումն է տեղի ունեցել: Պահեստի զօրքերը գնդի հրամանատարից պահանջել են արձակել իրանց տները և դրա համար որոշ և կարճ ժամանակ են տուել: Ընդհանրապէս պահեստի զինւորները գրգռված դրութեան մէջ են. նոյն իսկ քաղաքում անցնելիս իրանց տարօրինակ են պահում թէ սպաներին պատահելիս և թէ այլ դէպքերում:

Թիֆլիսի հայոց կոնսիստորիայի ծառայողները ուրբաթ ժամի 1-ին գործադուլ արին, ներկայացնելով հետևեալ պահանջները. 1) աւելացնել ծառայողների ռոճիկը 30% (ծառայողները ստանում են 18 ր. 50—55 կ.): 2) Ի նկատի ունենալով կենսական պիտոյքների թանկութիւնը, որի պատճառով ծառայողները ընկել են մեծամեծ պարտքերի տակ, տալ ծառայողներին իբրև նպաստ, իւրաքանչիւրին երկ-երկու ամսական ռոճիկ: 3) Թոյլ տալ գանձապահին անհրաժեշտ պէտքերի համար տալ ծառայողներին փոխարինաբար դրամ ի հաշիւ ռոճիկների: 4) Ծառայողների հետ վարվել քաղաքավարի և մարդու պէս, առանց կոշտ ու կոպիտ նկատողութիւնների և դրական ձևերի: 5) Անդամ Գրիգորիս քահանայ Երզնկեանցին յայտնել նրա կոշտ և կոպիտ վարվելու համար: 6) Ծառայութեան ժամերը թողնել այնպէս, ինչպէս առաջ է եղել, այն է 9—2 ժ. իսկ աւելորդ աշխատանքի համար առանձին վարձատրութիւն: 7) Մասնատրել պաշտի արդիւնքից բոլոր ծառայողներին և ոչ անհատներին: 8) Ծառայողներից մէկի հիւանդութեան դէպքում հոգալ նրա բժշկութեան ծախքը թեմական արդիւնքից: 8) Տալ արձակուրդ ծառայողներին 1—4 ամիս տարին: 10) Ծառայողներից մէկի կամ միւսի արձակվելը կախված լինի ընկերական դատից»:

Թիֆլիսի Սուղերնի փողոցում այժմ արդէն պատրաստ է և շուտով կըսկսէ գործել յայտնի բարերար Զուբալովի ծախքով շինված աղքատանոցը: Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարը դիմել է նահանգապետին և խնդրել, որ այդ հաստատութեանը դրվի հետևեալ անունը. «Ն. Ե. Զուբալովի աղքատանոց»:

Կովկասի ոստիկանութեան գլխաւոր գեներալ Շիրինկինը կազմակերպել է Անդրկովկասի և Վլադիկավկազի երկաթուղիների վրա պետական թղթակցութիւնների առաքման գործը:

Անդրկովկասի երկաթուղիների գլխաւոր Ի. Կ. Իվանովսկու փոխարէն նշանակված է նրա օգնական պ. Շայկեվիչը, որը դեկտեմբերի 20-ին կըժամանէ Թիֆլիս:

Այս տարվայ նորակոչներից շատերը, որոնք պէտք է հաւաքվէին Թիֆլիս, ցանկութիւն են յայտնել չօգտվելու իրանց երկար արձակուրդից. նրանք ուզում են անմիջապէս հաւաքվել Թիֆլիսի զօրակայանը և ապրել պետական հաշւով: Զինւորական վարչութիւնը նախ մերժեց նրանց այդ խնդիրը, իսկ յետոյ ընդունեց:

Թիֆլիսի առևտրական ուսումնարանի աշակերտների և մի քանի ուսուցիչների մէջ նոյնպէս այս վերջին օրերս դժգոհութիւններ և անհամաձայնութիւններ են ծագել: Բարձր դասատան աշակերտները հրաժարվում են յաճախել ուսումնարան, պահանջելով մի քանի ուսուցիչների հրաժարականը:

Թիֆլիսում ապրող օսեթինները, վրդովված իրանց հայրենակիցներից մէկի վարմունքով, խնդրում են տեղական լրագիրներին տպագրել հետևեալը. «Թիֆլիսում բնակվող օսեթինները, նոյեմբերի 16-ին ընդհանուր ժողովում, քննելով Կուլումբէգովի զզուելի պրովոկատորական վարմունքը, որ արտայայտվեց նրանում, որ Կուլումբէգովը խնդրեց Կովկասի բարձր իշխանութեանը թոյլատրել իրան կազմակերպել օսեթիններից կամաւոր մի զօրախումբ կարգը պահպանելու համար,—որոշեցին. 1) յայտնել ընդհանուրի գիտութեանը, որ օսեթինները, թէ քաղաքներում և թէ գիւղերում, միաձայն և միահամուռ միանում են ազատարար շարժմանը, գործելով ազատութեան համար մարտնչողների շարքերում, այդ պատճառով ոչ մի օսեթին չէ կարող ընկերակցել Կուլումբէգովի ստորաքարշ միտումներին և ձգտումներին. 2) յայտնել Կուլումբէգովին խորին արհամարհանք և զզուանք, և 3) Կուլումբէգովի և նրա հետ որ և է յարաբերութիւն պահպանողների դէմ բոյկօտ անել»:

Թիֆլիսի փոխ-նահանգապետ նշանակվում է փոխարքայի դիւանի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ իշխան Գ. Ս. Գրուզինսկին, որը մի քանի ամիս առաջ ուղարկված էր Գորու գաւառը գիւղացիական շարժումը ճնշելու համար:

Մի քանի ժամանակ առաջ Թիֆլիսում կազմակերպված «կարգի կուսակցութիւնը» վճռել է իր բոլոր անդամներին տալ որոշ նշաններ, որոնցով նրանք կարողանան ջոկվել խուլիգաններից, որոնք անխնայ կողոպտում և յարձակումներ անում:—Երևի այդ ընկերութեան կոմիտէտն լաւ զգում է, որ շատ քիչ տարբերութիւն կայ իր անդամների և «յարձակվող-կողոպտողների» միջև, այդ պատճառով ստիպված է զգում արհեստական значками բաժանել, ջոկել նրանց բուն խուլիգաններից, այսինքն մարդկային հասարակութեան ամենազարշահոտ տիղմերից: Տարօրինակ բան՝—ոչ մի մարդավայել կուսակցութիւն երկիւղ չէ կրում, որ իր անդամներին կը շփոթեն խուլիգանների հետ. այդ վախն զգում է միայն «կարգի կուսակցութիւնը»...

Վերջին օրերս Թիֆլիսի Նախալովկա թաղում կայացաւ բոլոր ուտելեղէն, ձկնեղէն և կալբաս վաճառող խանութների գործակատարների միտինգը, որի մէջ կայացրին հետևեալ որոշումները. 1) Բոլոր ուտելեղէնների, ձկնեղէնների և կալբասի խանութները հասարակ օրերը պէտք է բացվեն առաւօտեան ժամը 7-ին և փակվեն երեկոյեան 7-ին: 12 ժամվայ բանւորական օր, ցերեկը ժամը 1-ից մինչև 3 ժամն էլ հանգիստ: 2) Կիրակի օրերը փակել ամբողջ օրը: 3) Ձկնեղէն և կալբասեղէն փողոցում վաճառել միայն կիրակի օրը, երբ խանութները բոլորովին փակ են: 4) Տէրերն իրաւունք չունեն արձակելու գործակատարներին, առանց ընտրովի ընկերական դատաստանի: 5) Տիրոջ հաշւով ամսական մի անգամ բաղանիս ուղարկել 20 ռուբլուց պակաս ամսական ռոճիկ ստացող գործակատարներին, և այլն, և այլն: 12 տարեկանից սկսած՝ աշակերտները պէտք է ստանան 5 ռուբլուց ոչ պակաս:

Ուրբաթ նոյեմբերի 18-ին, առաւօտեան ժամի 10-ին Դիդուբէի հրապարակում կայացաւ քաղաքիս գինեվաճառների, օղեվաճառների, ճաշարանապետների, հիւրանոցատէրերի և նման հաստատութիւն պահողների համաժողով (միտինգ): Մտքերի երկար փոխանակութիւններից յետոյ ժողովը որոշեց՝ ընտրել քաղաքիս 19 թաղաբաժիններից նուիրակներ 2—3 անձ իւրաքանչիւր թաղից, որոնք սոցիալ-դեմոկրատ բանւորական կուսակցութեան հետ միաբան պէտք է մշակեն բոլոր յիշեալ հիմնարկութիւն պահողների համար ընդհանուր պարտադիր կանոններ և ներկայացնեն այսօր, նոյեմբերի 20-ի ընդհանուր ժողովին: Այդ կանոնները պէտք է որոշեն՝ թէ յիշեալ հիմնարկութիւնները օրվայ որ ժամին պիտի բացվեն և որ ժամին փակվեն, առաջիկայ յանձնարարին պատճեններ վերցնելու, ծառայողների և տէրերի փոխադարձ յարաբերութիւնը և այլն: Ժողովի վերջում հանգանակութիւն բացվեց իրանց ընդհանուր պէտքերի (զինաւորման) համար և հաւաքեցին մինչև 250 ռուբլի:

Միտինգներ և ժողովներ: Այսօր, նոյեմբերի 20-ին, երեկոյեան ժամը 5-ին միտինգ է կայանալու մանկավարժական արհեստի ներկայացուցիչներից և բարձր դասարանների սաներից, տարրական դպրոցների ուսուցիչներից, մանկավարժական գրականութեան գործիչներից, և այլն: Քննութեան առարկան լինելու է «Կովկասի մանկավարժների դաշնակցութեան» նախագիծը և ընտրութիւններ կատարելու տեղական ճիւղի համար:—Այսօր ժամը 2-ին II գիմնազիայում ծնողները և բարձր դասարանների աշակերտները հրավիրված են ժողովի, քննելու նոր ծրագիրը:—Այսօր, նոյեմբ. 20-ին, երեկոյեան 7 ժամին կը կայանայ ժողովրդական ընթերցանութիւնների ընկերութեան ընդհանուր ժողովի նիստի շարունակութիւնը. կայանալու են պաշտօնատար անձերի ընտրութիւններ:—Այսօր Վերայում կայանալու է սօցիալ-դեմօկրատական երկու ֆրակցիաների խառը միտինգը. քննութեան առարկան են. 1) վերջին դէպքերը և յեղափոխութիւնը, 2) կովկասեան ժողովրդների աւտոնոմիան և սօցիալ-դեմօկրատիան:—Սկիզբն է ժամը 10-ին առաւօտեան:

Ամերիկայից Կրոնշտադ է հասել «Միննէապոլիս» կրէյսէրը, որին հրամայված է իր վրա առնել բոլոր ամերիկահպատակներին, եթէ խառնակութիւններ ծագեն: Բացի դրանից, ասում է «С. От.» լրագիրը, նաւապետը հրահանգ է ստացել նաւն առնել բարձրաստիճան անձերի, եթէ նրանք կարիք ունենան ապաստան որոնելու:

Կանանց շուտափոյթ օգնութեան ընկերութիւնը ստացել է Աստրախանից տիկին Հեղինէ Առստամեանի միջոցով այնտեղի հայուհեաց բարեգործական ընկերութիւնից 205 ռուբլի և 17 պուդ 30 ֆունտ հին և նոր շորեր ուղարկելու աղէտից վնասվածներին ուր որ աւելի կարիք կայ:

Երկուշաբթի, նոյեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 4-ին նշանակված է Թիֆլիսի բոլոր լրագիրների գրասենեակային ծառայողների, էկսպեդիտորների, ցրուիչների և ծառաների խառն ժողովը՝ խորհրդակցելու իրանց կարիքների մասին:

Պետերբուրգի համալսարանի մի խումբ ուսանողներ վճռել են հրատարակել «Կենսագրական ժողովածու ազատութեան համար մարտնչողների»: Ամեն մի կենսագրութեան հետ տրվելու է նաև գործչի պատկերը: Գործիչները լինելու են 60 թւականներից մինչև մեր օրերն ապրողները: (Русь)

Ստացանք «Հասկեր» մանկական ամսագրի 2-դ համարը մանկավարժական բաժնով:

Թիֆլիզի հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ յօգուտ Շուշու և Նախիջևանի աղէտից վնասուածների ստացել է նուէրներ փողով և հագուստով հետևեալ անձերից.—Տիկ. Ն. Իգիթխանեանից—50 ր., տ. Ե. Վարդանեանից 5 ր., օր. Ալօյեանից 3 ր., ընդամենը 58 ռուբլի: Տիկին Մելիք-Մարութեանից, տ. Գանջունցեանից, տ. տ. Տէր-Միքաէլեանից, Ղալամքարեանից, Կատ. Դալթեանից (հաւաքած իր շրջանում), Բախչեանից, Առստամեանից, Ադամալեանից, Կուզանեանից, Գրամեանից, Թումանեանից, Սարգսեանից, Վ. Բարխուդարեանից, Ֆլորենսկիյից, Գէորգեանից և պ. պ. Ծովիանեանից, Գուլուլեանից—հին և մասամբ նոր հագուստ: Ստացուել է նմանապէս Նուխիից տիկ. Եղ. Միքայէլեանից և Ջաքաթալայից—տիկ. Սօֆիա Տէր-Իսրայէլեանից մի-մի հակ հին և նոր հագուստ: Վարչութիւնն իր խորին շնորհակալութիւնն է յայտնում վերոյիշեալ անձանց և խնդրում է յարգոյ հայ հասարակութեանը շարունակել նուէրներն ուղղել նոյն հասցէով.—Գանովսկայա փողոց № 19, հաց ու ձևի արհեստանոց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԱՒԸ:

Թերթերը գուշակեցին, ընթերցող, որ Թիւրքիան վերսկսեց հայկական ջարդերը... Նա վաղուց էր առիթ որոնում, բայց առիթը չէր ներկայանում: Հայը միշտ խուսափում էր: Եւ ահա կարմիր Սուլթանը ինքը շտապեց, իր գործակալների միջոցով, առիթներ ստեղծել... Սակայն հակապետական ինչ շարժում նկատեց նա հայերի կողմից: Եւ ոչ մի բան: Դարերով ստրկութեան լծի տակ քայքայված հայ ռայեան, իր խոփ ու բրիչով, ինչ կարող էր անել թնդանօթների դէմ: Ի՞նչ կարող էր անել խաչապաշտ «գեավուրը» մօլեռնած ու աւազակաբարոյ քիւրդ, լազ, չէրքեզ ու թուրք տարրերի դիմաց: Եւ նա հնարաւորութիւն չէ ունեցել, այժմ էլ չունի, ազատ շունչ քաշելու, իր քրտինքի վաստակը վայելելու, մարդավայել ապրելու, ուր մնաց որ քաղաքակրթութեան բարիքներին ձգտելու:

Սակայն այդ ամենը կարծես դեռ քիչ են համարվում: Հայ անունը կարմիր Սուլթանին քնահարամ է արել... Որովհետև հայկական չարաբաստիկ հարցը նորից է լոյս ընկնում: Նա նորից է զարթեցնում շահասէր Եւրոպայի դիպլօմատիական կաբինէտների սեղանները: Մի կողմից Մակեդոնիան, ցեղակից սլաւոն ազգերի քթի տակ, իսկ միւս կողմից, անպաշտպան հայը, Եւրոպայի աչքից հեռու, խուլ Ասիայի մէջ...

Եւ հայերից Սուլթանը վրդովված է... Մակեդոնիայում, եւրոպական պետութիւնների ներկայացուցիչների առաջ, նա խաղ է խաղում, իսկ հայկական նահանգներում իր՝ դաւերը լարում... Ու այսօր նորից է հոսում ամեն տեղ հայի արիւնը... «Համիդիէ զօրք» կոչվող բաշիբոզուկները, միացած քիւրդ հրոսակների հետ, կատարում են վերևից յանձնարարված, իրանց միսիան, համարձակ կոտորում են, կողոպտում, այրում, աւերում և անպատիժ մնում, մինչև իսկ, պարգևատրվում... Ի՞նչու: Որովհետև Եւրոպայի դիպլօմատների առաջ հայկական նահանգները մաքրվում են հայերից այնպէս, ինչպէս որ Մայր-Հայաստանը...

Ի՞նչ փոյթ Եւրոպային, եթէ նրա շահերը չեն վտանգվում, եթէ նա շահ չ'ունի մեզնից: Եւ նա քարացել է ու լռել:

Դիպլօմատ Թիւրքիան այդ վաղուց գիտէր, նա Եւրոպայից ակնածում էր... Նա վաղուց էր նկատել իրան մօտեցող սև ամպերը և գիտէր, որ վաղ թէ ուշ փոթորիկ պիտի բարձրանար հայկական Կովկասից... Եւ այն օրից, երբ իրար կարեկցող երկու թշուառ ազգերի,—Մակեդոնիայի և հայկական յեղափոխական տարրերը իրար եղբայրական ձեռք կարկառեցին, նա պարզեց իր արիւնոտ ձեռքը դէպի դիւրավառ Կովկասը... Այստեղ էլ սկսվեց թափվել հայի արիւնը... Բիւրոկրատիական հովանաւորութիւնը վայելող թուրք տարրը ոտքի է կանգնել պատժելու ազատատենչ կուլտուրական հային, ու զինակից ունենալով ազատութիւն ստացած խուլիգանութիւնը, կօզակների հետ միասին, ահաբեկում են հայ ազգաբնակութիւնը: Իսկ նրա տնտեսական ու ֆիզիքական աւերակների վրա խելագարված բիւրոկրատիան իր բարօրութիւնն է ուզում վերականգնել:

Ինչ ցաւալի զուգադիպութիւն: Ինչ սրտաշարժ համերաշխ դաշինք բիւրոկրատիայի կողմից և որպիսի անհեռատեսութիւն ռուս դիպլօմատներից: Այսօր՝ հայը կոտորվում է, հալածվում, գաղթում, թիւրքական ազդեցութիւնը աճում, իսկ Կովկասը՝ վտանգված հիւծվում է... Ահա թէ ինչ վիճակվեց մեզ ազատագրութեան արշալոյսին: Ահա թէ Թիւրքիայի դիպլօմատիային աշակերտող Լօբանովն ու Գոլիցինը ինչպիսի բաղդի արժանացրին Ռուսաստանը:

Եւ մենք, սրտի կսկիծով, լսում ենք մեր հեռաւոր եղբայրների նահատակութիւնը ու չենք կարողանում ամոքել նրանց ցաւերը. որովհետև մեր իսկ ցաւերով ենք հիւանդ, որովհետև կապված են մեր ձեռքերը... Մինչդեռ կարմիր Սուլթանը հրճվում է իր յաղթանակով: Նա հասաւ իր մերձաւոր, գուցէ և հեռաւոր նպատակներին...

Լեւոն Դանիէլեան

Թիֆլիս, նոյեմբերի 10

ՁՈՐԵՂ ՀԱՆԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նամակ Գերմանիայից)

Դրեզդենից դուրս եկող մի նաւով Էլբա գետի երկու ափերին տարածվող Սաքսոնական Շուէյցարիան [1] էի հասել: Բայց ո՞ւր է անըմբռնելի բնութեան այն չքնաղութիւնը, որով ոգևորվել և ոգևորվում են գերմանական ամենահասարակ քաղաքացուց սկսած մինչև բնութեան երգիչ բանաստեղծները: Միթէ սա է այն բնութիւնը, որի մասին այնքան անօրինակ գովքով են խօսում գրքերը՝ «խիստ ռոմանտիկ, հրաշագեղ» և այլ ածականների արժանացնելով:

Ահա և Սաքսոնական Շուէյցարիայի ամենագեղեցիկ ձորերից մէկը համարվող Ուտեւալդէր-գրունդը. երկու իրար զուգահեռական տարածվող ժայռաշղթաների միջով անցնում է ոլոր-մոլոր սիրուն ճանապարհը. սրանք ժայռեր չեն մերոնց պէս, այլ քարերի հասարակ և ընդհանրապէս, միօրինակ համախմբութիւններ, որոնց տեսարանը միայն գերմանացուն՝ զարմացնել և հիացնել, գերմանացի բանաստեղծի զգացումների լարերին զօրեղ կպչել կարող է: Չը կայ թիւնք, չը կան բնութեան մեծ և հրաշալի ստեղծագործումներ. այս եզրակացութեանը կարող է գալ Կովկասի բնութեանը ծանօթ ամեն մի անհատ:

Ահա Սաքսոնական Շուէյցարիայի ամենայայտնի տեղերից և մի ուրիշը—Բաստայ սարը, որի գագաթին եղող ռեստօրան-հիւրանոցի մօտ շինված թումբից դիտում ենք բնութեանը: Վատ չէ տեսարանը, գոնէ այն մարդու համար, որ երկար ամիսներ կենտրոնական քաղաքներում հարկադրված է եղել ապրել: Ներքև ստորոտի մօտով, կանաչապատ և բնակչապատ հովտի միջից հոսում է Էլբա նաւարկելի գետը հանգիստ և խաղաղ, որպէս իր ափնակ ժողովուրդը: Աջից, գետի միւս ափին, տարածվում են լեռնաշղթայիկների շարաններ, որոնց մէջ ընդհանուր մակերևոյթից տեղ-տեղ գլուխ բարձրացնելու փորձեր են անում զանազան անտառապատ լեռներ և որոնք ոչ թէ Կովկասի լեռների պէս աշխատում են մէջք-մէջքի դիզվել, բնութեան խենթ և սանձարձակ ստեղծագործումներ առաջացնել, այլ, կարծես, ամեն կերպ աշխատում են համեստ լինել, բարձրութիւնից, բնութեան համարձակ խաղերից հեռու մնալ: Այստեղի բնութիւնը մեղմութիւն և խաղաղութիւն է արտայայտում և որը չէ կարելի Կովկասի հրաշալի բնութեան հետ համեմատել, որի սեպացած, երկինքը սուրացող լերան մի գագաթից արևի մայր մտնելու տեսարանը ամեն ինչ արժէ:

Կովկասը ուրիշ է բնութեան կողմից, անզուգական է. այո, անզուգական ինչ բնութիւնը ինքը նրա կոյր ուժերն են ստեղծել: Բայց անզուգական է և մարդկային գիտակից ուժերի ստեղծագործումը, կովկասեան կեանքը:

Երբ Բաստայ սարի վրայից նայում էք Սաքսոնական Շուէյցարիան, կարծես տեսնում էք, թէ ինչպէս խաղաղութեան և ապահովութեան հրեշտակը իր լայն թևերի հովանու տակն է պահում այդ աշխարհը: Այստեղի ձորերով, անտառներով անցնելիս զգում ես, որ քեզ պահապան ապահովութիւնը շրջում է հետդ, որ ոչ մի դարանակալ ձեռք չէ կարող թաքստարանից մի մահացու հարուածով կեանքիդ վերջ տալ: Ճիշդ է, այստեղ էլ հասարակական կռիւ կայ, բայց որը կուլտուրական ճանապարհով եղող գոյութեան, անհրաժեշտութեան պայքար է կոչվում և ոչ թէ ներքին պատերազմական բանակների կռիւ: Այս է այս երկիրը: Բայց ինչ է մեր անզուգական, սիրուն Կովկասը այժմ. ոճիրների անտակ շտեմարան, ցաւերի անհուն ծով, եղբայրասպան դաւեր և վերջապէս, ճշմարիտ, աշխարհահռչակ սուլթանի արնածով երկրի հետ եղբայրացած մի երկիր և գուցէ էլ աւելի. ուրեմն այս կողմից է անզուգական, առաջնակարգ, անփառունակ առաջնութիւն: Ո՞վ նետեց Էրիսեան կռուախնձորը կովկասեան ժողովուրդների մէջ, ով իր դիւթական ուժով կաշկանդեց մարդկանց մտածողութեան կարողութիւնը և նրանց դէպի եղբայրասպան կռիւը ուղղեց. ամօթ ու անէծք այդպիսիններին, որոնք կրակին կրակ աւելացրին, ամբոխային կործանիչ բնազդներին պարարտ հող պատրաստեցին: Իբր շատ քիչ էին այն խոցերն ու ցաւերը, որոնք մեզ դարերի շարաններից էին ժառանգութիւն մնացել, մեր կեանքի այն պակաս կողմերը, որոնք պէտք է լրացնէինք և ահա, դեռ այս բոլորը չարած, վրա են հասնում նորանոր բարդութիւններ աւելի ծանր և սոսկալի: Հետաքրքիր է իմանալ, հասարակական ցաւերի բազմապատկմանը հաւասար է նոյնպէս և գործիչների աւելանալը:

Գ. Եղիկեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիական բանւորների դիմումը. «Մատէն» լրագրի Լոնդոնի թղթակիցը յայտնում է, որ անգլիական բանւորների սինդիկատների կօնգրէսը նոյեմբերի 2-ին ընդունեց հետեւեալ վճիռը.

---

[1] Իր բնութեան պատճառով Սաքսոնիայի այս մասը այդպէս է կոչվում:

«Անգլիայի երկու միլիօն բանւորների ներկայացուցիչ յանձնաժողովը դիմում է եղբայրական շնորհաւորութիւններով իր ընկերներին—Ռուսաստանի կազմակերպուած բանւորներին: Յանձնաժողովը զարմանքով հետեւում է հերոսական զոհերին, որ նրանք մատուցանում են ազատութեան սուրբ գործին և շնորհակալութիւն է յայտնում նրանց հրէաների կոտորածի դէմ արած բողոքի համար: Բանւորական շարժման աւանդութիւնը ամէն տեղ և միշտ դէմ է եղել այն անդթութիւններին, որոնց տածում է կրօնական և ցեղային ատելութիւնը: Բանւորները միշտ դէմ են եղել ամէն մի ստրկութեան—յայտնի կամ դիմակաւորված:

Կռետէի խաղաղացումը: Կարելի է այդ խաղաղացումը աւարտուած համարել: Անգլիական լրագիրները արդէն խօսում են այն ռեֆօրմների մասին, որոնք կարող են վերջնականապէս խաղաղացնել կղզին: Ամենատիրողական ռեֆօրմները ֆինանսականն և վարչականն են: Ֆինանսական հարցը պէտք է լուծվի այնպէս, ինչպէս մակեդօնականը, այն է հաստատվի մի միջազգային յանձնաժողով: Կղզու կառավարիչ իշխան Գէօրգին բոլորովին չէ հաւանում հովանաւոր—պետութիւնների քաղաքականութեան և ամեն կերպ դիմադրում է օտարների ներմուծած նորութիւններին:

Բօլգարական երկաթուղիները: Բօլգարիան երկաթուղային նոր գծեր է կառուցանում, որոնք մեծ անհանգստութիւն են պատճառում Թիւրքիային: Նոր գծերի մեծ մասը կէնտրոնից գնում է դէպի Թիւրքական սահմանագլուխը: Թիւրքիան մտադիր է ինքն էլ հետեւել Բօլգարիայի օրինակին և Մարմարեայ ու Եգէական ծովերից երկաթուղային գծեր տանել մինչև բօլգարական սահմանը:

Մօլտկէի արձանը: Հոկտեմբերի 26-ին Բեռլինում տեղի ունեցաւ Մօլտկէի արձանի հանդիսաւոր բացումը, ներկայութեամբ Վիլհէլմ կայսրի, որ, ըստ իր սովորութեան, չը զլացաւ հիմն երգել պատերազմի և զինուորականութեան աստծուն: Ահա մի կտոր այն ճառից, որ արտասանեց կայսրը.

«Դուք գիտէք, պարոններ, թէ ինչ վիճակի մէջ ենք գտնվում մենք աշխարհի հանդէպ. ուրեմն ուրա չոր վառօդի և սրած թրի համար, ուրա մեր յայտնի նպատակի համար և մեր միշտ լարված ուժերի համար»:

Գերմանական առեւտուրը ասիական Թիւրքիայում: Հետեւեալ վիճակագրական տեղեկութիւնները շատ պարզ կերպով ցոյց են տալիս, թէ ինչու Գերմանիան այնքան մեծ պաշտպանութիւն է ցոյց տալիս Թիւրքիային: Գերմանական առեւտուրը Փոքր-Ասիայում սաստիկ զարգանում է. ահա պաշտօնական տեղեկութիւններ գերմանական առեւտրի մասին ասիական Թիւրքիայում:

	արտահանութիւն		ներածութիւն
1900 թ.	11,100,000	մարկ.	22,100,000 մ.
1901 թ.	12,300,000	մ.	23,100,000 »
1902 թ.	13,400,000	մ.	25,300,000 »
1903 թ.	14,600,000	մ.	27,100,000 »
1904 թ.	21,800,000	մ.	29,500,000 »

Ուրեմն 5 տարվայ ընթացքում Գերմանական էկսպօրտը (արտահանութիւնը) գրեթէ կրկնապատկվեց, իսկ իմպօրտը (ներածութիւնը) աւելացել է մի երրորդականով: Առեւտրի այդ արագ աջողութիւններին շատ եռանդուն կերպով աջակցեցին գերմանական բանկային ֆիրմաները, որոնք իրանք էլ ահագին օգուտներ ունեցան:

Եւ, իհարկէ, նիւթական այդ շահի համար, Գերմանիան զոհում է մարդկային բոլոր իդէալները, ջնջելով թշուառ հայ տարրի պաշտպանութեան հարցը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐԱԳՈՅՆ «ՄԱԶԱԼՈՒ» ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ

> «Ձեր սատծը ուրիշ տեղ է, ուրիշ տեղ,
> Մեր սատծը ուրիշ դեղ է, ուրիշ դեղ»...

Քաղաքային խորհրդի դահլիճը քանի գնում է այնքան աւելի «մազալու» կերպարանք է ստանում. իրաւասուների նիստերին ծայրէ ծայր դահլիճը և վերի յարկը լցվում է ամենատեսակ և ամեն կուսակցութեան երկու սեռի անձիքներով. իրաւասուները սունկի պէս բուսնող իրանց համար անակնկալ նորածին Դիմոսթենէսների արշաւանքի առաջ, միանգամայն խուճապել են... Նրանք խղճուկ դիրք բռնելով կամ լուռ նստած՝ իրանց զարմացական հայեացքները դահլիճի չորս կողմն են շրջեցնում և կամ խուսափում են նիստերից՝ նորելուկ Դիմոսթենէսների անողոք սլաքներից իրանց գլուխը նախապահպանելով...

Նոյեմբերի 23-ի նիստումն էլ, հաւաքվել է հազիւ 15—17 իրաւասու. սրանց տեղերը բռնել են կողմնակի այցելուներ: Նիստը մի կերպ բացվում է խուլ ձայնով իշխ. Ջերքեզովը: Վեր է կենում տեղից միջէս ալեւոր եւ անհանգիստ ճարտարախօս պ. Ա. Ս. Բաբովը և... զինուորված հազար ու մի վաւերաթղթերով՝ ձգնում է իր վրա նախորդ նիստում բարդված մեղադրանքից իրան արդարացնել՝ որ երբ ինքը որպէս քաղաքիս փողոցների սալայատակելումը ներգործական դեր խաղացող անդամ՝ երբէք անտես չէ արել քաղաքի ծայրամասերի շահերը և սալայատակի ծախսերը բաժանելիս՝ կենտրոնական մասին ոչ մի գերադասութիւն չէ տուել ծայրամասերից:

Բայց դա մի ֆիկցիա է,—կարուկ ձայնով և որոտընդոստ բառերով կանգնեցնում է նրան մի կուսակցութեան ներկայացուցիչ,—դուք, քաղաքի կենտրոնական մասը, որը չնչին տարածութիւն է բռնում, համարեա թէ ոսկեզօծել էք ժողովրդի փողերով՝ բաժին հանելով օրինակելի կերպով սալայատակելու համար նշանակված ծախսից՝ 600,000 ռուբլի, այն ինչ ծայրամասերը, որոնք անհամեմատ աւելի մեծ տարածութիւն են բռնում, անտես են առնված և ծախսված են նրանց համար կոպէկներ... Եւ այլապէս չէիք կարող վարվել, քանի որ դուք ցենզային բուրժուազիայի փոքրամասնութեան ընտրեալներիցն էք... Նորընծայ Դիմոսթենէսին բուռն կերպով ծափահարում են իսկ հինաւուրց Դիմոսթենէսը, որ ուրիշ անգամ սլաքներ կը փչէր իր դէմ այդ կերպ խօսողին՝ գլուխը կոր և բերանը փակ նստում է իր տեղը...

Այլ տեսակ լուսարուք:

Նախագահը առաջարկում է խորհրդին՝ յօգուտ Ռուսաստանի վնասված հրէաների քաղաքային գանձարանից մի գումար յատկացնել: Առաջարկութիւնը ընդունվում է ծափահարութեամբ. ծափահարում են ամէնքը, ծափահարում է և՛ իրաւասու իշխ. Միքելաձէն:

—Բայց դուք իրաւունք չունէք ծափահարելու, դառնում է դէպի իշխ. Միքելաձէն նրա մօտ կանգնած կուսակցութեան մի ներկայացուցիչ. դուք ամեն անգամ հազարներ էք նուիրում քաղաքային սնդուկից այս կամ այն վնասվածներին և ինքներդ էլ ծափահարում էք: Բայց ում փողն էք նուիրում, ով է ձեզ լիազօրութիւն տուել ժողովրդի փողերը այդ կերպ անօրինելու, արդեօք դուք ժողովրդից համաձայնութիւն ունէ՞ք այդ կերպ վարվելու, քանի որ նրա ընտրածը չէք. ո՛չ, դուք, իշխան, կարող էք ծափահարել այն դէպքում միայն, երբ ինքներդ ձեր գրպանից կը նուիրէք այդ գումարները, իսկ այժմ ծափահարելու ամենևին իրաւունք չունիք...

Մի ժամանակ իր բերանից կայծեր արձակող իշխան-ծերուկը այժմ volens-nolens ստիպված է գլուխը կախ՝ տեղի տալ «փաքերակի» առաջ և դինջ ու լուռ դիրք բռնել իր տեղում:

Նախագահը առաջարկում է քննել նոր ընտրութիւնների համար զանազան ձեւակերպութիւններ (ֆօրմուլաներ). խառնվում են այս հարցի մէջ դարձեալ կողմնակի ճարտարախօսները, պահանջում են, որ մինչև նոր ընտրութիւնները՝ ներկայ իրաւասուները անմիջապէս հրաժարվեն իրենց պաշտօնից, որպէս ուզուրպատօրներ...

—Վերջապէս այս անտանելի է, բարձրանում է իր տեղից յուզված յայտնի Ցիցերոն իրաւասու Լ. Տիգրանեանը. էլ որտեղ է համաժողովքի ազատութիւն՝ երբ մեր իրաւասուների տեղը կողմնակի մարդիկ պիտի խօսեն ու տնօրինեն. այսպէս տանել գործը անկարելի է...

—Ներեցէք, պ. Տիգրանեան, կտրում է նրա խօսքը կուսակցութեան մի ուրիշ Ցիցերոն. մինչև այժմ ժողովուրդը գլուխը ծռած եւ ձեռներ խաչած մտիկ էր անում քաղաքային վարչութեան շէմքը դեղ ու դարման հայցելով ձեզանից իր ցաւերին, իսկ այժմ նա արթնել է եւ ուզում է իր իրաւունքները պաշտպանել, և նա, որ կարողացաւ այնքան ոյժ և տոկունութիւն ցոյց տալ հոկ. 17-ի մանիֆեստը հրատարակել տալով, կարող կը լինի և՛ այստեղ ներս գալ և իր իրաւունքները պաշտպանել. այն ժամանակ դուք, բոլորդ կը հեռանաք այստեղից և տեղի կտաք ժողովրդից ընտրված անձերին, որոնք ընդունակ կը լինեն նրա ցաւերը, կարիքները հասկանալ և նրանց սպեղանի դնել... Դուք նեղանում էք պ. Տիգրանեան... Ի զուր էք նեղանում, այստեղ նեղանալու բան չը կայ... Մեր Ցիցերոնն էլ, որը Նապոլէօնական ժամանակի հերոսների քաջամարտիկ ախոյեանն գոլով՝ անթիւ սուր նետեր էր փչել նրանց գլխին—յուզված նորածին Ցիցերոնների չարաչար հարցապնդումներից՝ ելք է որոնում ժամ առաջ դուրս գնալ այս անտանելի «բաղնիքից»...

Նախագահը շտապում է փակել նիստը, շտապով միմեանց հետեւից դուրս են գնում... «շոգ բաղնիք» ստացած իրաւասու-Ցիցերոնները, իսկ նրանց հեղինակաւոր ակնարկներով ճանապարհ են դցում դահլիճից «չար ժամանակիս» նորածին հռետորները՝ ուղղելով նրանց հասցէին նոյն երգը՝

> «Ձեր սատծը ուրիշ տեղ է, ուրիշ տեղ,
> Մեր սատծը ուրիշ դեղ է, ուրիշ դեղ»:

Րիփսօ.

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՀԻՐԳՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ԿԱՐԱԳԵՏՕԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԶՈՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԴԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.:
Խ. Ի. ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ:
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի կոն(սիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավետինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէկտրօ-բուժութիւն:
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼԶԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.
Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում ելեկտրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից:
(չ.ու.կ.) 20—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 58—300

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Կայսերական թատրոնների արտիստ Լ. Դօնսկօյի անտրեպրիզ
Կիրակի, նոյեմբերի 20-ին, պակասացրած գներով ցերեկը կը ներկայացվի
«ՖԱՈՒՍՏ»
օպերա 5 գործ. երաժ. Գունօյի:
Մասնակցում են տ.տ. Պրօկուդին, Բուդինա, Կարպօվա, պ.պ. Սլավին, Եվլախով, Չիստյակով, Շէյն.
Պարերը կը դնէ բալէտմէյստր պ. Բեկեֆի: Զինուորական երաժշտութիւն 1-ին սապերնի բատալիօնի պ. Րիչչերի ղեկավարութեամբ:
Սկիզբը ցերեկվայ ժամը 12½-ին:
Որովհետև ցերեկվայ ներկայացման տոմսակները չափազանց էժանացրած են, աշակերտական տոմսակներ չեն տրվի:
Երեկոյեան կը ներկայացվի «ՆԵՐՕՆ»,
օպերա 5 գործ. երաժ. Ռուբինշտէյնի:
Մասնակցում են տ.տ. Դուբրօվսկայա, Նովօսպասսկայա, Կարրի, Կարպօվա, պ.պ. Դօնսկօյ, Կարելին, Սօկօլսկի, Դրակուլի, Վօլսկի, Դեմենտենկօ, Ֆիլիպպօվ, Շէյն:
Պարերը կը դնէ բալէտմէյստր պ. Բեկեֆի. Զինուորական երաժշտութիւն 1-ին սապերնի բատալիօնի, պ. Րիչչերի ղեկավարութեամբ:
Սկիզբը երեկոյեան 8 ժամին:
Տեղերի գները սովորական են:
Անօնս. Երկուշաբթի, նոյեմբերի 21-ին կը ներկայացվի 2-րդ անգամ «ԳԷՅՇԱ»:
Երեքշաբթի, նոյեմբերի 22-ին վրացերէն լեզուով գուրիացիների օգտին կը ներկայացվի
«ՍԵՎԻԼԵԱՆ ՍԱՓՐԻՉ»
Չորեքշաբթի, նոյեմբերի 23-ին
«ՏՐԱՎԻԱՏԱ»
Պատրաստվում է ներկայացնելու «ՖԻԳԱՐՕԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ» Մօցարտի:
Օպերային ներկայացումները սարքող ընկերութիւնը կը ներկայացնի վրացերէն լեզուով ներկայացում համերգային բաժնով ի նպաստ վնասված գուրիացիների
I
«ՍԵՎԻԼԵԱՆ ՍԱՓՐԻՉ»
Օպ. 3 գործ. 4 պատկ. երաժ. Ռօսսինի, թարգմ. Գունիա.
Մասնակցում են տ. տ. Արցիբաշևա, Կարրի, պ. պ. Դօնսկօյ, Սօկօլսկի, Կօլօտով, Եւլախով, Տօմաշևիչ և վրացիների խումբը: Տոմսակները նախօրօք կարելի է ձեռք բերել «Возрожденіе» լրագրի խմբագրատանը և վրաց գրագիտութեան տարածող ընկ., իսկ 20-ին 21-ին 22-ին թատրօնի կասսայում:

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (ե.ո.) 24—100

ԲԺԻՇԿ
Ս. ՄԻՐԶՈՅԵԱՆ
Մասնագէտ Աչքի հիւանդութիւնների, վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը: Առաւօտեան 1—3 ժամը. երեկոյեան 5—6 ժամը: Սօլօլակսկայա փող. սեփ. տ.: 25—25

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը: 26—100

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկեվիչի փողոց. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա.օ.) 22—100

ԲԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ
Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար:
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Հասցէ—Աբասաբադեան հրապարակ № 9, մուտքը Շեկօֆիլեան փողոցից № 1:
(եր.հ.կ.) 9—20

ԲԺԻՇԿ
Բ. Ա. ՊԱՊՕՎԵԱՆ
Մասնագէտ—քթի, կոկորդի և ականջի: Ընդունում է հիւանդներին—առաւ. 10—12½ ժ.
երեկ. 5—7 ժ.
Հասցէն. Միքայէլեան փողոց տ. Զօրբերի № 157. 7—10

ԲԺՇ. Մ. ՉԱԼԵԱՆ
Ընդունում է ներքին հիւանդութիւններով Գանձակում, Դօնդուկօվսկայա փողոց, տուն Զախարօվի, № 22. 3—5

ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ
Երկուշաբթի, նոյեմբերի 14-ին
Հայոց Դրամատիկ. ընկերութեան խումբը մասնակցութեամբ տ. Սիրանոյշի
կը ներկայացնէ
Առաջին անգամ հայոց բեմի վրա
Ուժեղներ եւ Թոյլեր
Դրամա 4 գործ. Տիմկօվսկու, թարգմ. Խաժակի
Մասնակցում են՝ օր. Բէգիջանեան, տ.տ. Արաքս-Զարիֆեան, Մայսուրեան, Մելիքեան, Վարդուհի, Սիրանոյշ, պ.պ. Ապեան, Զարիֆեան, Պետրոսեան, Ստեփանեան և Վրոյր:
Սկիզբը ժամը ճիշդ 8-ին, երեկոյեան
Ռեժիսոր Ս. Բաքանաեան
(.. կ.) 2—2

Բագւում անցեալ հոկտեմբերի 20-ին խառնակութիւնների ժամանակ կորել է Բանանց գիւղի բնակիչ
ՍԱՐԳԻՍ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ՏՕՆԵԱՆՑԸ
Նրա հայր Միքայէլը գնացել է Բագու որդուն փնտրելու, բայց չէ գտել. գուցէ փախել է Բագուից, կենդանի է մնացել,—յայտնի չէ: Նրա դժբախտ հայրը աղերսում է՝ ով գիտէ նրա որդու տեղը, ուր գտնվելը, որտեղ սպանվելը (եթէ սպանված է) կամ ում ձեռքով թաղվելը, թող բարեհաճի յայտնել իրան, որդեկորոյս հօրը: Յայտնել կարելի է «Մշակի» միջոցով կամ նրա թղթակից Ստ. Տէր-Աւետիքեանի (Գանձակ): 1—5

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեմանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը
Կօրգանովսկայա փող. № 20 Վերայում: Սեփական տ., տէլէֆօն № 791: (ա. օ.) 34—150

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ
սրանով յայտարարում է, որ ներկայ տարվայ նոյեմբերի 22-ին, ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է մրցում կամուրջներ շինելու համար Կօժօրեան և Բեհբուտեան փողոցներում, IV քաղաքամասում, 98 պ. ս. Բրոնէ խողովակ 0,25×0,16 տրամագծով և 2 հատ մաքրելու հորեր:
Դրանց ամեն մէկի գինն առանձնապէս նշանակված է. գրաւոր յայտարարութիւններ պէտք է տրվեն փակ ծրարներով մինչև նոյեմբերի 23-ը:
Մրցման մասնակցողները կարող են պայմանների հետ ծանօթանալ բոլոր գործի օրերը ժամը 1—2½-ը, Ուպրավայի շինարարական բաժնում: 2—3

Սղնախի ս. Կարապետ եկեղեցու համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
լաւ ձայն ունեցող ՄԻ ՏԻՐԱՑՈՒ. ռոճիկը 15 րուբլի, բացի եկեղեցական և ծխական մուտքերից: Հասցէն Սղնախ, երեցփոխ Մովսէս Ամիրխանեանցին: (չ. ե.) 2—4

Գուտտենբերգ
գրավաճառանոցը յայտնում է ի գիտութիւն վերաբացվող հայ դպրոցների, որ ընդունում է ամեն տեսակ դասական եւ բերբերցանութեան գրքերի պատուէրներ, որ կատարում է ամենայն ճշտութեամբ: Նոյն տեղը վաճառվում են Գ. Աղայեանի աշխատութիւնից՝

Մայրենի լեզու ա. տարի.	—20
» » բ. տարի.	—30
» » գ. դ. և յաջորդ տարիների.	—70
» » տարրական ֆիզիկա ըստ Կրիւգերի	—30
Յ. Առաքելեանի աշխատութիւնից՝	
Մայրենի լեզու ա. տարի	—25
» » բ. »	—30
» » գ. »	—40
Քերականութիւն.	—25

Գումարով գնողներին զեղչ: Դիմել Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенберг Г. И. Галустянцу.

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Քարաճեան
Ընդունում է ներքին և ջղային հիւանդութիւն ունեցողներին առաւօտեան 9—11 ժ.: երեկոյեան 5—7 Վելեամինօվսկայա փողոց, տ. Սաֆարովի, № 13. տելեֆօն № 1061: (չ. ե. հ.) 21—20

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.“
Նոր հրատարակութիւններ
Զօմբարտ, Ինչու այժմ ամեն մարդ հետաքրքրվում է քաղաքատնտեսական և ընկերավարչական խնդիրներով, 10 կ.:
Աւէլինգ, Իրաւունքի ծագումն և պատմութիւնը, 10 կ.:
Գաուլկէ, Կապիտալ և կապիտալիզմ, 12 կ.
Երեք գրքոյկներն էլ—Ս. Թաւայեանի թարգմանութեամբ:
Դիմել գրավաճառներին: Պահեստը. Թիֆլիս, Բեհբութեան փ. 25. 4—3

Լոյս տեսաւ
Յարութիւն Եսայեանի
«ՍԻՐՈՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ»
Պատկեր. գինը 10 կոպէկ
Դիմել հեղինակին—Թիֆլիս, Հավլաբար, Լազարեւսկայա 49: Գրաշրջիկներին՝ գումարով գնելիս՝ 40% զեղչ: Ճանապարհածախսը իրանց վրա: Արժէքն ուղարկել կանխիկ:

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երեւանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 1[illegible] ր. գիշ.
Ալեքսանդրապօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալեքսանդրապօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երեւան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

Զուտ արդիւնքի կէսը
ԹՇՈՒԱՌԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ ՕԳՏԻՆ
Լոյս տեսաւ և վաճառվում է
ՆՇՏԱՐԻ
ԺԱՀՐՈՏ ՎԷՐՔԵՐ
(Պատկերներ)
Գինն է 15 կոպէկ
Գումարով գնողներին—Թիֆլիսում 25% զեղչ, Թիֆլիսից դուրս՝ 20%, ճանապարհածախսը մեր հաշւին:
Դիմել գրավաճառներին և մեզ՝ հետեւեալ հասցէով. Тифлисъ, Дворцовая ул. Т./Д. Н. Бозарджіанцъ съ С-ми Геворку Бабурянцу. 2—3

Ղուբայի հայոց դպրոցի համար հարկաւոր է ռուսաց լեզուի, ռուսաց վայելչագրութեան և թուաբանութեան ուսուցիչ: Շաբաթական 24 դաս: Տարեկան 450 րուբլի ռոճիկ, հաշուելով ուսուցչի Ղուբա ժամանելու օրից. բնակարան, ծառայ, վառելափայտ, և լուսաւորութիւն: Դիմել՝ Куба, ктитору Аветису Мартиросянцу. 3—4

Մի փորձված մարդ ցանկանում է գործակատարի կամ մի ուրիշ յարմար պաշտօն: Համաձայն է գնալ ուրիշ քաղաքներ. Հասցէն Тифлисъ (Дидубэ) Главная ул. д. д-ра Сабестіанскаго, противъ д. Акопова, Константину Саломбекову. 2—2

Հարկաւոր է մի ուսուցիչ Նաւթլուղի ծխական ուսումնարանի համար. անհրաժեշտ է վրացերէն լեզու իմանալ (խօսակցութիւնը). պայմանների համար դիմել Միքայէլեան փողոց № 154. բժ. Տէր-Գրիգորեանցին: (ու.կ.) 2—2

Աժան և մատչելի գներով ծախվում են զանազան տեսակի
ԳՈՐԳԵՐ
Михайловсхая ул. 9 № 32. (չ.ու.կ) 4—5

Դասատուութեան մէջ փորձված
Ուսանող տալիս է դասեր բոլոր միջնակարգ դպրոցների բոլոր առարկաներից: Նոյն տեղում ապրող գերմանացի ընդունում է դասեր նոր լեզուներից: Михайловскій просп. д. № 32, студ. А. А. (չ. ու. կ.) 4—5

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում
ՆԱՐԵԿ
Գրիգոր Նարեկացու Մատենագրութիւնը տպված է մաքուր, խոշոր տառերով, լաւ թղթի վրա և ընտիր կազմով:
Գինն է 2 րուբլի:
Պահեստը Կենտրոնական գրավաճառանոցում:
(չ. կ.) 2—2

Հ. Առաքելեանի խմբագրութեամբ և հրատարակութեամբ լոյս տեսնող
ՄԵՍՐՈՊԵԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
մինչև այժմ լոյս չը տեսած հետեւեալ գրքերը
IV ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ և IX ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ
Այս ամառվայ ընդհատումից յետոյ սկսել են տպագրվել: ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ (IX) գիրքը այս օրերս պատրաստ կը լինի և կուղարկվի բաժանորդներին: Իսկ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ, որ ստուար և մեծ գործ է, չէ կարող շուտով լոյս տեսնել, ուստի որոշված է բաժանորդներին ուղարկել հետզհետէ լոյս տեսնող պրակները: Այս օրերս [illegible] բոլոր բաժանորդներին կուղարկվի պօստով, պատուիրած բանդերոլով 1) Առաջին պրակը—Ա տառը, 2) գրքի գունաւոր շապիկը, պատրաստված Վիեննայում և 3) գրքի կազմը, պատրաստված Պետերբուրգում: Շապիկը և կազմը պէտք է պահել մինչև կտպվեն բառարանի բոլոր պրակները և ապա կազմել:
Հանրագիտական բառարանի նոր բաժանորդագրութիւն չէ ընդունվում առ այժմ: Որ և է պահանջի կամ հասցէի փոփոխութեան մասին յայտնել այս հասցէով. Թիֆլիս, Հ. Առաքելեանին, խմբագրութիւն «Մշակ» լրագրի: (շ. 2 անգամ) 4—4

Կովկասի դպրոցական շրջանի պ. հոգաբարձուի կողմից հաստատված
ԿՈՒՐՍԵՐԸ
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
երկու սեռի անձերի համար.
Աչքի առաջ ունենալով աշխատող դասակարգի մէջ գերմաներէն սովորելու պահանջը կուրսերի վարչութիւնը բաց է անում մի յատուկ դասընթաց 15 հոգու համար՝ հանրամատչելի գներով: Ընդունելութիւնն ամեն օր—Судебная, 44. (հ. կ.) 2—2

Լոյս տեսան և վաճառվում են ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ և ՊԱՏԻ 1906 թ.
„ՇԻՐԱԿ“
Պատկերազարդ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
(Ութերորդ տարի)
հարուստ բովանդակութիւնը
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է վաճառականական, բժշկական, առողջապահական, բնագիտական, գիտական, կաթնատնտեսական, մեղուաբուծական, տնտեսական, ճանապարհորդական, բանասիրական, կենսագրական, գիւղատնտեսական, բանաստեղծական—ազգային քնար, պատմական—Այծեմնիկ՝ հայ հերոսուհու յաղթանակը Անիում, Լեզու կարող՝ ճշգրիտ անգք, Ո՞վ էր Վարդան Մամիկոնեանը և այլ տեղեկութիւններ: Վիճակագրութիւն հայերի—Թիւրքիայում, Պարսկաստանում և Ռուսաստանում, գլխաւոր բնակավայրերը (հայ-Թրքական կոտորածների առիթով): Զուարճալիք, րեբուսներ, խնդիրներ, հանելուկներ, վիճակներ:
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր և աֆօրիզմներ, եկեղեցական և ազգային տօների բացատրութիւններ, հայոց հեթանոսական սովորութիւններ, թռչնապահական, մեղուաբուծական, անասնապահական, բժշկական, առողջապահական տեղեկութիւններ. խորհրդածութիւններ հեղինակաւոր անձանց: Ազգային քնար—բանաստեղծութիւններ. հայկական կեանքից և հայոց պատմութիւնից նշանաւոր դէպքեր—Թաթարների արշաւանքը. տնտեսական, արհեստագիտական խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւն, կենսագրութիւններ, նոր անեկդօտներ, առածներ, հանելուկներ, ժողովրդական և ազգային երգեր, լէլեներ: արկածալի և հերոսական դէպքեր Զէյթունցիների և Սասունցիների կեանքից: Տեղեկութիւններ մահմեդական վարդապետութեան մասին:
Իւրաքանչիւր օր, առաջին երեսների վրա տպագրված է միմի բանաստեղծական կտոր, համարեա բոլոր հայ բանաստեղծներից, որոնք արտայայտում են նրանց հայեացքը դէպի ազգն ու հայրենիքը:
ՏԱԽՏԱԿԸ ներկայացնում է Արագածը, Շիրակի դաշտը հայ գութանաւորներով, Անիի աւերակների առաջ նստած հայ կինը հովւի սրնգի նուագի տակ փնտրում է իր հայրենիքի անցեալ փառքերը: Նկարը զանազանագոյն է և կարող է սենեակի զարդ ծառայել:
ՊՐԵՄԻԱՆ միացրած է ծոցի օրացոյցի յաւելուածին մօտ 60 երես—«Վերածնութիւն Հայաստանի», հայերի մատուցած ծառայութիւնը ռուսներին Կովկասի տիրապետութեան ժամանակ, խոստումներ և յոյսեր Հայաստանի անկախութեան և այլն և այլն:
«Շիրակ» օրացոյցները զարդարված են մի շարք գունատիպ պատկերներով:
Գները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ.: Գումարով գնողներին լինում է մեծ չափով զեղչ:
Դիմել՝ Александрополь, типографія „Ширакъ“ Карапету Апинянъ.—արտասահմանից—Alexandrople, Karapet Apinian (Caucase).
Աւելի մանրամասն բովանդակութիւնը առանձին թերթով տպագրված ցանկացողները կարող են ձրի ստանալ:
4—10
Կարապետ Ափինեան

ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ
КОМПАНІИ ЗИНГЕРЪ
Необходимы для домашняго употребленія. Образцовы въ конструкціи и исполненіи. Продаются только въ магаз. Комп. Зингеръ.
Отпускъ машинъ съ платежемъ отъ 1 рубля въ недѣлю.
Безплатное обученіе шитью и моднымъ художественнымъ вышивкамъ.
Остерегайтесь подделокъ!
Ручныя машины съ высокимъ рукавомъ во всѣхъ нашихъ магазинахъ отъ 25 руб.
Болѣе 1200 собственныхъ магазиновъ по всей Россіи!
ШВЕЙНЫЯ МАШИНЫ КОМПАНІИ ЗИНГЕРЪ
Магазинная вывѣска
Рисунокъ утв. Отд. пром. и торг. М. Фин.
THE SINGER MANFG. CO.
TRADE MARK
фабричное клеймо которымъ снабжены машины.

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԶԻՆԳԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Վաճառվում են միայն Ընկերութեան սեփական խանութներում: Աւելի քան 1200 խանութ Ռուսաստանի Կայսրութեան ամեն քաղաքներում: Խանութները ճանաչվում են Ռուսաց «З» տառը ձեւակերպող ցուցանակներով, համաձայն ֆինանսների մինիստր.—Արդիւնաբեր. և Առևտր. բաժնի հաստատած նկարին: Զգուշացէք կեղծիքներից կ. Մեքենաները տրվում են սկսած շաբաթական 1 րուբլի վճարից: չ2—25

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
скаго Т—ва Гермесъ, Мад. Ул. № 15.